# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 10 (1510) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 26, 2011
VOLUME 31, NO. 10 (1510) SATURDAY, MARCH 26, 2011

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՐՑԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍԵՄԻՆԱՐ ՖՐԱՆՍԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԷՋ

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան եւ Հայ Եւրոպական Խորհուրդի կազմակերպութեամբ, Մարտ 25-ին Ֆրանսայի Ազգային Ժողովի դահլիճներէն ներս տեղի պիտի ունենայ սեմինար-քննարկում՝ «Խաղաղութիւն եւ ապահովութիւն Հարաւային Կովկասի մէջ եւ ինչ ապագայ տարածաշրջանին» նիւթին շուրջ:*

*Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20-ամեակի ծիրէն ներս տեղի ունեցող միջոցառումը կը հովանաւորեն ՀՀ Ֆրանսայի մօտ լիազօր դեսպան Վիգէն Չիտէչեան եւ Իսի Լէ Մուլինոյի երեսփոխան ու քաղաքապետ Անտրէ Սանդինի:*

*Քննարկումներու ընթացքին տարբեր նիւթերու շուրջ պիտի զեկուցեն Տնտեսագէտ՝ Ժիրայր Աշճեան, աշխարհաքաղաքագէտ՝ Ֆրէտէրիք Անսէն, քաղաքագէտ՝ Դալին Փափազեան, ՀՀ պաշտպանութեան նախկին փոխնախարար եւ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Վահան Շիրխանեան, եւ քաղաքագէտ՝ Ժուլյէն Զարիֆեան:*

## ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐՑԱԽ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ԹՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԻՆ



*Լոս Անճելըսի մէջ ՀՀ Գլխաւոր հիւպատոսութեան նախաձեռնութեամբ Հայաստան ու Արցախ երկրորդ անգամ ըլլալով մասնակցած են Միացեալ Նահանգներու արեւմտեան ափի խոշորագոյն թուրիստական ցուցահանդէսին, որ կազմակերպուած է «Լոս Անճելըս Թայմզ»-ի կողմէ՝ Մարտ 19-20-ին:*

*Տարբեր երկիրներէ ժամանած հարիւրաւոր կազմակերպութիւններ Լոս Անճելըսի Համագումարներու կեդրոնէն ներս աշխարհին ներկայացուցած են աշխարհի տարբեր անկիւններուն գտնուող՝ հանգիստի ու ճամբորդութեան լաւագոյն հանգստավայրերը: Երկու օրերու ընթացքին ցուցահանդէսը դիտելու եկած են տասնեակ հազարաւոր այցելուներ:*

*Հայաստան ու Արցախ ցուցահանդէսին ներկայացած են միասնական տաղաւարով, ուր ցուցադրուած են հայկական երկու պետութիւններու գեղատեսիլ անկիւններն ու թուրիստական հմայքները՝ մեծադիր լուսանկարներով:*

*Հիւպատոսութեան տարածած հաղորդագրութեան համաձայն, Հայկական տաղաւարի մօտ այցելուներու հարցերուն կը պատասխանէին Հայաստանէն ու Լեռնային Ղարաբաղէն ժամանած, նաեւ՝ տեղի հայկական թուրիստական ընկերութիւններու ներկայացուցիչները: Այցելուներուն կը բաժանուէին տեղեկատուական գրքոյկներ:*

*Այս կարեւոր միջոցառման հայկական երկու պետութիւններու մասնակցութիւնը ողջունած է «Թայմզի» հրատարակիչ Էտի Հարթենսթայ յայտնելով, որ, ինչպէս անցեալ տարի, այս անգամ եւս հայկական տաղաւարը աչքի կը զարնէր գեղեցիկ նկարներով ու նիւթերու բազմազանութեամբ:*

*«Իբրեւ լրատուական կառոյց՝ մենք ուրախ ենք, որ Լոս Անճելըսի պէս բազմամշակոյթ քաղաքի բոլոր համայնքները, որոնց շարքին՝ հայկականը, այստեղ ներկայ են: Այս իսկապէս լաւ առիթ է չփուելու, ճանչնալու իրար ու նոր մշակոյթներու հետ ծանօթանալ»,-ըսած է «Լոս Անճելըս Թայմզի» ղեկավարը ՀՀ գլխաւոր հիւպատոս Գ. Յովհաննիսեանին:*

*Ցուցահանդէսի մշակութային մասով ելոյթ ունեցած են Լոս Անճելըսի Վարդան եւ Սիրանոյշ Գէորգեաններու եւ Զուարթնոց պարախումբերը:*

## ՀԱՑԱԴՈՒԼԻ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ



*Ազատութեան Հրապարակին վրայ՝ Րաֆֆի Յովհաննիսեան մամլոյ ասուլիսի ժամանակ*

*Հացադուլի մէջ գտնուող՝ «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեան Երեքշաբթի, Մարտ 20-ին Ազատութեան հրապարակին վրայ կայացած մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեց, որ քրիստոնէաբար կը մօտենայ իր մասին Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի խօսքերուն:*

*Տէր-Պետրոսեան «Հայկական Ժամանակ» թերթի միջոցաւ փորձած էր բացատրել, թէ ինչու Մարտի 17-ին Ազատութեան հրապարակի վրայ տեղի ունեցած հանրահաւաքի ժամանակ չէ մօտեցած ողջունելու Րաֆֆի Յովհաննիսեանին: «Եթէ Րաֆֆի Յովհաննիսեանը, հրապարակային ծոմապահութեան փոխարէն, կոնկրետ քաղաքական պահանջներով հացադուլ յայտարարէր, ես ոչ միայն կ'ողջունէի, այլեւ լիակատար զօ-*

*Շար.ը էջ 4*

## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՇԵՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 10-ԱՄԵԱԿԸ



*Կլենտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւնը, զանազան միջոցառումներով նշեց իր եկեղեցւոյ հիմնադրութեան 10-րդ տարեդարձը: Այս բոլորի եզրափակումն էր անցեալ Կիրակի, Մարտ 20ին, 2011, Կլենտէյլի «Ռընէսանս» շքեղ սրահին մէջ տեղի ունեցած ճաշկերոյթը, որուն ներկայ էր աւելի քան 500 հոգի:*

*Սոյն պաշտօնական հանդիսութեան կը նախագահէր Հիւսիսային Ամերիկայի Կաթողիկէ Հայերու առաջնորդ՝ Արհ. Մանուէլ Եպս. Պաթազեան: Ներկայ էին Լոս Անճելըսի մօտ Հայաստանի աւագ հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննէսեան, քոյր յարանուանութեանց, ինչպէս նաեւ Ս.Դ.Հ.Կ.ի Ռ.Ա.Կ.ի եւ Հ.Յ.Դ.ի հայ մամուլի եւ տարբեր կազմակերպութեանց ներկայացու-*

*Շար.ը էջ 8*

# ՄՏԱԾԵԼ, ԹԷ ՀԱՒԱՏԱԼ. ԱՅՍ Է ԽՆԴԻՐԸ

ԵՂԻՇԷ ՄԵԾԱՐԵՆՑ

Հայ Ազգային Կոնգրէսի Մարտի 17-ի հանրահաւաքը բաւական բուռն հասարակական արձագանք է առաջացրել, յատկապէս հասարակական ակտիւ շրջանակներում՝ թէ կոնգրէսի համակիր, թէ ընդդիմախօս: Արձագանքներն ու մեկնաբանութիւնները տարբեր են, ծայրայեղ հիացականից մինչեւ ծայրայեղ հիասթափական: Միգուցէ դրանց մի ահազին մասն էմոցիոնալ ծագում ունի, հիմնուած է անձնական համակրանք-հակակրանքի վրայ:

Ի դէպ, էմոցիաների մասին բաւական շատ խօսուեց հէնց հանրահաւաքում: Աւելին, կարելի է թերեւս ասել, որ հէնց էմոցիաների խնդիրն էր հանրահաւաքի բուն առանցքը: Կոնգրէսի առաջնորդները փորձում էին հասարակութեանը համոզել, հաւաստիացնել, որ էմոցիաներով հարց չի լուծուի, որ յաղթում է ոչ թէ էմոցիան, այլ միտքը: Այդ մասին բաւական երկար խօսեց նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանը: Կոնգրէսի միւս առաջնորդներն էլ բաւական խօսեցին այդ մասին եւ յորդորեցին հասարակութեանը, նաեւ խնդրեցին, որ էմոցիաների չտրուեն եւ հաւատան Լեւոն Տէր-Պետրոսեանին, վստահեն նրան:

Երկրի համար ճակատագրական պահերին մտքի եւ էմոցիայի յարաբերակցութեան, առաւելութիւնների եւ հակասականութեան մասին թերեւս կարելի է փիլիսոփայական մեծ վէճի բռնուել, առանց որեւէ կոնկրետ արդիւնքի: Ի վերջոյ, ամաշխարհային զարգացման պատմութեան մէջ եղել են բազմաթիւ մեծ իրադարձութիւններ, որոնք տեղի են ունեցել հէնց էմոցիոնալ խթանի շնորհիւ, եւ եթէ բանը մնար մտքի գերակայութեանը, ապա դրանք կարող էին նաեւ չլինել: Միւս կողմից, էմոցիան էլ կարող է անպտուղ լինել, եթէ չուղեկցուի մտքով: Անիմաստ է հաւի ու ձուի պատմութիւն յիշեցնող քննարկումներ ծաւալելը:

Փոխարէնն արժէ առաջնորդուել կոնգրէսի առաջնորդութեան իսկապէս արժէքաւոր տրամաբանութեամբ, եւ էմոցիաներին տրուելու փոխարէն, պարզապէս մտածել: Մտածելու դէպքում, բնականաբար, առաջանում են հարցեր: Օրինակ, հարց է առաջանում. Եթէ կոնգրէսի առաջնորդութիւնն այդքան կարեւորում եւ արժեւորում է միտքը, մտածելը, այդ դէպքում ինչու է կոնգրէսի համակիրներին յորդորում կամ խնդրում «հաւատալ» ու «վստահել» Տէր-Պետրոսեանին: Չէ որ դա հակասում է նոյն այդ առաջնորդութեան «մտքի ուժի» տեսութեանը կամ պրակտիկային: Չէ որ երբ ուեւէ մարդու կամ մարդկանց յորդորում կամ խնդրում ես անվերապահ վստահել ու հաւատալ մի մարդու, կարեւոր չէ, թէ ով է այդ մարդը, ապա ստացւում է, որ մարդկանց ասում ես, թէ մտածել պէտք չէ, այլ պէտք է միայն հաւատալ ու վստահել:

Ստացւում է, որ կոնգրէսի առաջնորդութեան համար մտածել պէտք է, բայց ոչ հաւաքուած բազմութեանը: Մտածելու «արտօնութիւնն» իրենցն է, իսկ բազմութիւնը պէտք է միայն վստահի ու հաւատայ: Հըմ: Մտածելու բան է:

Մտածելու բան է նաեւ մէկ այլ հանգամանք, որ նշմարուեց կոնգրէսի Մարտի 17-ի հանրահաւաքում: Հանրահաւաքի մասնակիցները մեծ ոգեւորութեամբ մուտք գործեցին Ազատութեան հրապարակ, իսկ կոնգրէսի առաջնորդութիւնն էլ յայտարարեց, որ դա համաժողովրդական պայքարի մէջ յաղթանակ է, քանի որ հրապարակը վերադարձուեց ժողովրդին: Տէր-Պետրոսեանն էլ դիմեց հաւաքուած բազմութեանն ու ասաց, թէ Ապրիլի 8-ին Ազատութեան հրապարակում հանրահաւաք անցկացնելու համար առաջարկում է քաղաքապետարանին իրազեկման դիմում ներկայացնել հանրահաւաքի «100 հազարանոց բազմութեան անունից»: «Դէ թող մերժէն հարիւր հազարին», յայտարարեց Տէր-Պետրոսեանը:

Բայց, բոցաշունչ եւ յաղթական ելոյթներից յետոյ, երբ արդէն Ապրիլի 8-ի հանրահաւաքի մասին յայտարարել են եւ բարի գիշեր են մաղթել, ու հասարակութիւնն արդէն ցրւում է հրապարակից, մէկ էլ կոնգրէսի համակարգող Լեւոն Զուրաբեանը «յանկարծ» յիշելով մօտենում է խօսափողին ու յայտարարում, որ եթէ Ապրիլի 8-ին իշխանութիւնը թոյլ չտայ հանրահաւաք անել Ազատութեան հրապարակում, ապա իրենք կը գնան Մատենադարան ու «կ՛որոշեն իրենց անելիքը»:

Նորից մտածելու բան: Եթէ հրապարակը վերադարձուել է ժողովրդին, առաւել եւս եթէ հրապարակը վերադարձրել է ժողովուրդը, ինչու է կոնգրէսը նրան նորից հետ տանում Մատենադարան: Խօսքն այն մասին չէ, որ պէտք էր գիշերը մնալ կամ չմնալ: Ինչու չի յայտարարւում, որ անկախ քաղաքապետարանի որոշումից, ժողովուրդը Ապրիլի 8-ի հանրահաւաքը անելու է Ազատութեան հրապարակում, քանի որ այն արդէն իրենն է: Կամ կարելի էր ընդհանրապէս լռել, մտածելու աւելորդ տեղիք չտալ ու թողնել, որ հասարակութիւնը մեծ ոգեւորութեամբ գնայ տուն:

Շախմատում իհարկէ պատահում է, որ կատարում ես քայլ, յետոյ նորից յետքայլ անում: Միայն թէ զարմանալի է, թէ ինչու «յետքայլի» մասին յայտարարուեց ոչ թէ Ազատութեան հրապարակում հանրահաւաքը դեռ չցրուած, երբ ըստ էութեան լսողներն արդէն բաւական քիչ էին եւ «յետքայլի» հանրային արձագանքը բաւական թոյլ էր լինելու այդ պահին:

Այնպիսի տպաւորութիւն է, որ միտքը ուժ հռչակած կոնգրէսի առաջնորդութիւնն այդուհանդերձ իրականում վախենում է կոնգրէսի յետեւից գնացող հասարակութեան մտքից, մտածելու հնարաւորութիւնից:

Ցամենայն դէպս այն, որ Մարտի 17-ի հանրահաւաքում աննախադէպ շատ էին մի կողմից մտածելու հզօրութեան, միւս կողմից Տէր-Պետրոսեանին հաւատալու անհրաժեշտութեան մասին կոչերը, թերեւս ստիպում է մտածել, որ կոնգրէսի առաջնորդութեան մօտ առկայ են հասարակական լայն շերտերի ու իրենց մտածողութեան համարժէքութեան հետ կապուած բաւական լուրջ ներքին մտավախութիւններ: Այլապէս ինչու պէտք է հանրահաւաքի եթէ ոչ գրեթէ

Շար.ը էջ 5

# ԾՈՒՂԱԿՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿ

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Իշխանութեան քարոզչութիւնը սկսել է ակտիւօրէն գեներացնել այն միտքը, որ Լեւոն Տէր-Պետրոսեանն ու Սերժ Սարգսեանը, մտածելով պետական շահի մասին, փորձում են գտնել երկխօսութեան եզրեր: Կոնգրէսի համակիրների մէջ էլ արդէն կան անհատներ, որոնք իրավիճակը հէնց այդպէս էլ ներկայացնում են, նոյնիսկ կանխատեսում, որ ապագայում կարող են տեղի ունենալ առաւել անսպասելի իրադարձութիւններ, եւ մենք ականատես լինենք Կոնգրէս-ՀՀԿ համաձայնագրի, որով կողմերը կը պայմանաւորուեն անցկացնել ազատ եւ արդար ընտրութիւններ:

Այդպէս իհարկէ հեռու չէ այն օրը, երբ կը լինի նաեւ Կոնգրէս-ՀՀԿ յետընտրական կոալիցիոն յուշագիր: Դրա մէջ ոչ մի ողբերգական բան չկայ, եթէ այդ ամէնը նպաստի երկրում առկայ տնտեսա-քաղաքական մենաշնորհները վերացնելուն, եթէ այդ ամէնը նպաստի երկրում առկայ իրաւաքաղաքական ճգնաժամը յաղթահարելուն, Սահմանադրական կարգի հաստատմանը:

Այլապէս կարող է ստացուել այնպէս, որ ընդամէնը կարող է ընդլայնուել երկրի տնտեսա-քաղաքական, իրաւական լծակները մենաշնորհած ուժերի համաձայնութեան շրջանակը, եւ այդ ուժերի մէջ կը ներառուի նաեւ կոնգրէսը:

Պետական շահը կարծես թէ Հայաստանում դառնում է շատ մոդայիկ մի բան, եւ դրանով հնարաւոր է արդարացնել ամէն ինչ: Արթուր Բաղդասարեանը Փետրուարի 29-ին պետական շահով արդարացրեց Սերժ Սարգսեանին միանալու իր քայլը: Ես հեռու եմ իհարկէ այն մտքից, որ եթէ Բաղդասարեանը չմիանար, ուժ չէին կիրառելու խաղաղ ցուցարարների հանդէպ: Կը կիրառէին, ու Բաղդասարեանը պարզապէս զգաց պահն ու փախաւ ապահով տեղ:

Իրենց քայլերը նոյն կերպ բացատրեցին Վազգէն Մանուկեանը, Արտաշէս Գեղամեանը, այլ կարկառուն դէմքեր, որոնք թունդ ընդդիմադիր էին մինչեւ ինչ որ պահը, իսկ ինչ որ պահից յետոյ պետական շահը նրանց ստիպեց կցուել իշխանութեանը:

Հայ Ազգային Կոնգրէսից առայժմ որեւէ պաշտօնական յայտարարութիւն չի եղել պետական շահով դրդուած իշխանութեանը միանալու մասին: Առայժմ միայն կոնգրէսի գործողութիւններից, յատկապէս վերջին հանրահաւաքում կոնգրէսի առաջնորդ Տէր-Պետրոսեանի ելոյթներից միայն այդպիսի տպաւորութեան մասին է խօսքը: Ընդ որում, այստեղ կարծես թէ լիովին նոր երեւոյթի մասին խօսք չկայ, քանի որ կոնգրէսը վերջին երեք տարուայ ընթացքում իր ընտրած չափաւոր մարտավարութեամբ միշտ էլ գործել է իրավիճակի բոլոր հանգամանքները հաշուի առնելու սկզբունքով, ինչը նշանակում է նաեւ իշխանութեանը հաշուի առնել:

Երբ հաշուի ես առնում բոլոր հանգամանքները, ապա բոլոր հանգամանքներն էլ հաշուի են առնում քեզ: Թերեւս հէնց այդ պատճառով նաեւ կոնգրէսը մինչ այժմ չի դարձել լուսանցքային ուժ եւ շարունակում է լինել երկրի հիմնական ընդդիմադիր ամենամասշտաբային կառոյցը:

Խնդիրն այստեղ այն է, որ այժմ կարծես թէ կոնգրէսը որոշել է հաշուի առնել ոչ բոլոր հանգամանքները եւ առաւելապէս կենտրոնանալ իշխանութեան հանգամանքը հաշուի առնելու վրայ, առաւել եւս, որ իշխանութիւնը կարծես թէ յայտնում է համարժէք փոխադարձութեան պատրաստակամութիւն. Սերժ Սարգսեանը ռեվերանսներ արեց ընդդիմութեանը, ոստիկանութիւնը հետ քաշուեց Ազատութեան հրապարակից, իշխանական քարոզչութիւնը եթէ դեռ չի սիրում, ապա կարծես թէ է սկսել է յարգել կոնգրէսին:

Այդ ամենից սակայն առաւելապէս ծուղակի հոտ է փչում: Իշխանութեան ծուղակում կարող են յայտնուել կամ կոնգրէսի ղեկավարութիւնը, կամ հասարակութիւնը եւ պետութիւնը կարող են յայտնուել իշխանութեան ու կոնգրէսի ղեկավարութեան ծուղակում: Ամբողջ հարցն այն է, թէ ինչպիսին է լինելու կոնգրէս-իշխանութիւն հեռահար փոխյարաբերութեան, կամ այսպէս ասած շախմատային խաղի արդիւնքը հասարակութեան եւ պետութեան համար:

Օրինակ, երբ «պետական շահով» պայմանաւորուած ինչ որ քայլեր արեցին կամ իրենց քայլերը պետական շահով բացատրեցին Բաղդասարեանը, Գեղամեանը, Մանուկեանը եւ այլք, հասարակութիւնն ու պետութիւնը դրանից ոչնչով չշահեցին: Թէեւ երեւի թէ այդուհանդերձ հասարակութիւնն ու պետութիւնը շահեցին, բացայայտելով, թէ ինչ են իրենցից ներկայացնում այդ գործիչները:

Ինչով են շահելու հասարակութիւնն ու պետութիւնն այժմ: Կարեւոր է նաեւ ժամանակացոյցը, թէ երբ է լինելու այդ արդիւնքը:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՔՆՆԱՐԿՒՈՒՄ Է ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԸ

*Ազգային ժողովում քննարկւում է Ընտրական օրէնսգրքի բարեփոխուած նախագիծը, որով առաջարկուող փոփոխութիւնները ներկայացրեց ԱԺ պատգամաւոր, ԱԺ պետաիրաւական յանձնաժողովի նախագահ եւ նախագծի համահեղինակ Դաւիթ Յարութիւնեանը: Նախագիծը ներկայացնելուց առաջ նա նշեց, որ օրէնսգրքի բարեփոխուած տարբերակն արդէն քննարկման է ուղարկուել Վենետիկի յանձնաժողով, որն իր նախնական եզրակացութիւնը կը ներկայացնի Ապրիլի կէսերին:*

*Յարութիւնեանի ներկայացմամբ՝ առաջարկուող փոփոխութիւններով նախատեսւում է փոխել Կենտրոնական ընտրական յանձնաժողովի կազմաւորման ներկայ՝ կիսակուսակցական համակարգը: Ըստ Յարութիւնեանի՝ կիսակուսակցական սկզբունքով ձեւաւորուող Կենտրոնական ընտրական յանձնաժողովը չի նպաստում ընտրական վարչարարութեան արդիւնաւէտ իրականացմանը, մինչդեռ նախագծով առաջարկւում է, որ ԿԸՀ-ն ունենայ եօթ անդամ: Նրանց պէտք է նշանակի հանրապետութեան նախագահը, եւ նրանք պէտք է ունենան աշխատանքային փորձ ու մասնագիտական պատրաստուածութիւն:*

*Ընտրական օրէնսգրքի փոփոխութիւնների նախագծով առաջարկւում է ընտրատարածքային յանձնաժողովները կազմել հետեւեալ սկզբունքով՝ մէկ հոգի տեղամասային յանձնաժողովից, մէկ հոգի՝ ԱԺ իւրաքանչիւր խմբակցութիւնից եւ մէկ հոգի՝ ընտրատեղամասային ընդունող յանձնաժողովից:*

*Ընտրացուցակներում մահացածների կամ գոյութիւն չունեցող անձանց ընդգրկման վատ պրակտիկայից հրաժարուելու համար, Յարութիւնեանի խօսքով, առաջարկւում է քուէարկութեան օրուանից մէկ օր առաջ հրապարակել ընտրութիւններին մասնակցող մարդկանց ցանկը: Ընտրական օրէնսգրքի բարեփոխուած տարբերակի մէկ այլ փոփոխութեամբ առաջարկւում է քարոզչութեան համար անվճար տրամադրել ոչ միայն պետական, այլեւ համայնքային դահլիճները:*

*Մէկ այլ փոփոխութիւն վերաբերում է նախընտրական շրջանում բարեգործութեան անուանտակ քարոզչութիւն անելու խնդրին: Նախագծով առաջարկւում է այն բարեգործական կազմակերպութիւններին, որոնց անունը կարող է նմանեցուել կուսակցութիւններին, արգելել նախընտրական շրջանում բարեգործութիւն անել:*

### ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ ՄՏԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ



*Ցուցարարները կը պահանջեն ոստիկաններէն՝ բանալ Ազատութեան հրապարակը*

*Ընդդիմադիր Հայ Ազգային կոնգրէսի՝ Մարտ 17-ի Մատենադարանի մօտ սկսուած հանրահաւաքը շարունակուեց Ազատութեան հրապարակում:*

*Հանրահաւաքի բազմահազար մասնակիցները ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբեանի՝ հրապարակը վերանուաճելու կոչից յետոյ երթով շարժուեցին դէպի Ազատութեան հրապարակ, որը 2008 թուականի յետընտրական իրադարձութիւններից յետոյ փակ է եղել ընդդիմադիրների հաւաքների համար:*

*Բոլոր կողմերից ոստիկաններով շրջապատած հրապարակը «յանձնուեց» ընդդիմադիրներին՝ ՀԱԿ-ի եւ ոստիկանութեան միջեւ տեղի ունեցած բանակցութիւններից յետոյ:*

*Մարդիկ, մտնելով Ազատութեան հրապարակ, իրենց վանկարկումներով ողջունեցին երեքշաբթի օրուանից այնտեղ հացադուլ անող ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանին:*

*Նախքան Ազատութեան հրապարակ գնալը Զուրաբեանը կոչ էր արել ժողովրդին զերծ մնալ բռնութիւններից, հանդէս բերել զսպուածութիւն, քանի որ «ոստիկանութիւնը եւս ժողովրդի մասն է»:*

*Լեւոն Տէր-Պետրոսեանը, ով ընդարձակ ելոյթ էր ունեցել Մատենադարի մօտ, այստեղ էլ դիմեց հանրահաւաքականներին՝ ասելով.*

*- «Տուեալ պահի գլխաւոր խնդիրներն են՝ առաջին, քաղբանտարկեալների անյապաղ ազատ արձակումը, եւ դա տեղի է ունենալու շատ շուտով: Երկրորդ, Ազատութեան հրապարակում արտօնուած հանրահաւաքներ անցկացնելու իրաւունքի վերականգնումը: Դա նոյնպէս տեղի է ունենալու: Երրորդ իշխանութիւնը այսօր եւեթ անյապաղ պէտք է հաւաստիացնի մեր ազգին, ժողովրդին, որ պետութիւնը բացայայտելու է Մարտի 1-ի բոլոր սպանութիւնները եւ դրա բոլոր մեղաւորները կանգնելու են արդարադատութեան առջեւ»:*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ. «ԿԱՆ ՀԻՆԳ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄ ԵՆ ԱԶԱՏ ՄՐՑԱԿՑՈՒԹԵԱՆԸ»

*Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեանը նշել է ազատ մրցակցութեանը խոչընդոտող հինգ հանգամանքները: Հայաստանի տնտեսական մրցակցութեան պաշտպանութեան յանձնաժողովի հիմնադրման 10-ամեակին նուիրուած միջազգային գիտաժողովում նա ասել է. «Անցումային տնտեսութեամբ երկրներում ազատ մրցակցութիւնը զգալի նշանակութիւն ունի: Այսօր Հայաստանում կան մի քանի օբիեկտիւ հանգամանքները, որոնք խոչընդոտում են ազատ մրցակցութեանը:*


*ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեան*

*Դրանք են՝ հարկային եւ մաքսային վարչարարութեան, ձեռնարկութիւնների թափանցիկ աշխատանքի, կոռուպցիայի մակարդակի, երկրում առկայ բացասական երեւոյթների նկատմամբ հասարակական վերաբերմունքի, տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակի խնդիրները»:*

*Տիգրան Սարգսեանը նշել է, որ կառավարութիւնը հարկային եւ մաքսային վարչարարութիւնը բարեփոխելու ծրագիր ունի: Բացի այդ, կառավարութիւնը կարեւոր օրէնք է ընդունել, որը մօտ 500 խոշոր ձեռնարկութիւնների ստիպում է հրապարակել ֆինանսական հաշուետուութիւնները:*

### «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՅԵՂԱՇՐՋՈՒՄ ՉԻ ԼԻՆԻ, ՔԱՆԻ ՈՐ ՉԿԱՅ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՄԱՍՍԱ»

*Հայ Ազգային կոնգրէսի կողմից կատարուող քայլերի եւ կոչերի մէջ կառուցողական տարրեր են նկատւում: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ Մարտի 19-ին յայտարարեց ԱԺ ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Մկրտիչ Մինասեանը: Նա յայտարարեց, որ թէեւ համամիտ չէ ՀԱԿ վերջին հանրահաւաքում Լեւոն Տէր-Պետրոսեանի հնչեցրած հարցադրումների հետ, սակայն նկատել է, որ ընդդիմութիւնն աւելի կառուցողական մօտեցումներով է հանդէս գալիս:*

*«Եթէ իրատեսական լինեն հարցադրումները, կարելի է ողջունել, իսկ երբ ծայրայեղ են հարցադրումները, բնականաբար, դրանք ոչ ոք չի կարող ընդունել: Եթէ այսօր ՀԱԿ-ը որոշել է որպէս կառուցողական ընդդիմութիւն հանդէս գալ եւ ոչ թէ ամէն ինչ հերքելու ու բնաջնջելու ճանապարհով գնալ, ընդամէնը ես ողջունում եմ»,-ընդգծեց ՀՀԿ խմբակցութեան ներկայացուցիչը: Սա, սակայն, չի նշանակում, որ իշխանութիւնը պատրաստ է գնալ երկխօսութեան ընդդիմութեան հետ: «Դեռեւս վաղ է խօսել երկխօսութեան մասին»,-նկատեց Մինասեանը:*

*Անդրադառնալով Տէր-Պետրոսեանի այն դիտարկմանը, թէ Հայաստանում եւս հնարաւոր են եգիպտական եւ թունիսեան սցենարների կրկնութիւն, պատգամաւորը նշեց, որ Հայաստանում յեղափոխութեան կամ յեղաշրջման հեռանկարներ նկատելի չեն: «Այսօր երկրում չեմ տեսնում «կրիտիկական մասսա, կրիտիկական պահ, որը կը բերի յեղաշրջման: Միաժամանակ երկրում կան բազմաթիւ խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն»,-նկատեց բանախօսը:*

### ԱՐՄԱՒԻՐՑԻՆԵՐԸ ԴԷՄ ԵՆ ՎԵՐԸՆՏՐՈՒԱԾ ՀՀԿ-ԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԲԱԽՈՒՄ ԵՐԵՒԱՆ-ԱՐՄԱՒԻՐ ՄԱՅՐՈՒՂՈՒ ՎՐԱՅ

*Արմաւիրի քաղաքապետի ընտրութիւնների արդիւնքների դէմ բողոքող արմաւիրցիների եւ ոստիկանների միջեւ Մարտ 21-ին բախում է տեղի ունեցել:*

*Արմաւիրցիները, ի նշան բողոքի,փակել էին Արմաւիր-Երեւան մայրուղին: Որոշ տուեալներով՝ բախման հետեւանքով մի քանի մարդ բերման է ենթարկուել ոստիկանական բաժանմունք:*

*Մարտի 20-ին կայացած Արմաւիրի քաղաքապետի ընտրութիւններում քաղաքապետ է վերընտրուել ՀՀԿ անդամ Ռուբէն Խլղաթեանը՝ հաւաքելով 6849 ձայն: Նրա հիմնական հակառակորդը «Եռասիւն» ՍՊԸ նախագահ, իրաւաբան, անկուսակցական Սեւակ Մինասեանն էր, ով ընտրութիւններում հաւաքել է 5811 ձայն: Ի դէպ, արմաւիրցիների մեծամասնութիւնը հենց Սեւակ Մինասեանին էր տեսնում քաղաքապետի պաշտօնում:*

*Քաղաքապետի պաշտօնի համար պայքարում էին եւս 2 անկուսակցական թեկնածուներ՝ Առնակ Գեւորգեանն ու Կարէն Վարդանեանը, ովքեր հաւաքել են, համապատասխանաբար, 710 եւ 330 ձայն:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ԼՈՒՐԵՐ

## ԲՐԱՅԶԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ Է ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՕԴԱՆԱՒԱԿԱՅԱՆԻ ԴԷՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ



*Ստեփանակերտի օդանաւակայանի նորակառոյց շէնքը*

*Ադրբեջանում Միացեալ Նահանգների դեսպան, ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի նախկին համանախագահ Մեթիւ Բրայզան «անընդունելի» է որակել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գօտում, այդ թւում՝ քաղաքացիական օդանաւերի նկատմամբ ուժի կիրառման սպառնալիքը:*

*«Ազատութիւն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայութեանը տուած հարցազրոյցում Մեթիւ Բրայզան անդրադարձել է ԵԱՀԿ-ի Մարտի 17-ի յայտարարութիւնում հնչեցուած կոչին՝ դիպուկահարներին հեռացնելու մասին, եւ կարեւորել ԵԱՀԿ-ի կողմից քննութեան անցկացումը՝ շփման գծի մօտակայքում իննամեայ ադրբեջանցի տղայի եւ հայ զինծառայողի մահուան փաստերի առնչութեամբ:*

*Բրայզան նշել է, որ մահուան այդ դէպքերը հերթական անգամ ապացուցում են, որ ուժի գործադրումը պէտք է դատապարտման արժանանայ:*

*«Ինչպէս համանախագահները շարունակաբար յայտարարել են, Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը ռազմական լուծում չունի», - ընդգծել է Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպանը:*

*«Ասուածի առնչութեամբ պէտք է ասեմ, որ ուժի գործադրման սպառնալիքը, այդ թւում՝ քաղաքացիական օդանաւերի դէմ, այն դէպքում, երբ այդ օդանաւը որեւէ սպառնալիք չի ներկայացնում, անթոյլատրելի է եւ չի համապատասխանում Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների ստանձնած պարտաւորութիւններին՝ հակամարտութեան խաղաղ, բանակցային կարգաւորման վերաբերեալ», - յաւելել է Մեթիւ Բրայզան:*

*Այս շաբաթ Ադրբեջանը, անդրադառնալով Ստեփանակերտում քաղաքացիական օդանաւակայանի վերակառուցման եւ Մայիսին Երեւան - Ստեփանակերտ թռիչքների բացման մասին լուրերին, սպառնացել էր «վերացնել օդանաւերը», փաստարկելով, որ «Լեռնային Ղարաբաղի օդային տարածքը գտնւում է Ադրբեջանի իշխանութիւնների տնօրինութեան տակ, այն փակ է»:*

*«Մենք կողմերին կոչ ենք անում լուծել քաղաքացիական աւիացիայի անվտանգութեան խնդիրները նախքան Լեռնային Ղարաբաղում նոր օդանաւակայանի բացումը», - յաւելել է Միացեալ Նահանգների դեսպանը:*

## ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*րակցութիւն կը յայտնէի նրան», ըսած է Հայաստանի առաջին նախագահը:*

*Արձագանքելով Լեւոն Տէր-Պետրոսեանի քննադատութեան Րաֆֆի Յովհաննիսեան ըսաւ, որ անոնք որոնք կ'ուզեն իր ներկայութիւնը Ազատութեան հրապարակի վրայ վերափոխել կրօնական արարքի, չեն ծանօթացած Մարտի 15-ի իր ելոյթին: Բոլոր պարագաներուն, ան ըսաւ, թէ քրիստոնէաբար կը մօտենայ Տէր-Պետրոսեանի խօսքերուն:*

*«Ես կարող եմ ասել, որ ես բոլորին՝ եւ առաջին նախագահին, մաղթում եմ՝ անկեղծաբար եւ սիրով, Աստծոյ օրհնութիւն, երկարատեւ կեանք», - ըսաւ «Ժառանգութեան» ղեկավարը՝ աւելցնելով. - «Եթէ ոեւէ մարդ կայ, որ ինձ ցանկանում է սատանայի կործանում, դա նաեւ իւրաքանչիւր մարդու իրաւունքն է»:*

*Հարցին, թէ այսուհետեւ «Ժառանգութիւնը» կը տեսնէ արդեօք Հայ Ազգային Գոնկրէսի հետ համագործակցութեան եզրեր, Յովհաննիսեան պատասխանեց, որ տակաւին կը տեսնէ:*

*Ասուլիսի ընթացքին Րաֆֆի Յովհաննիսեան յստակ դարձուց իր քաղաքական պահանջներ՝ իշխանութիւնը ժողովուրդին, ազատ հրապարակ, ազատ քաղաքացի, ազատ երկիր, ժողովուրդին աշխատանք, ո՛չ անարդարութեան, աղքատութեան եւ արտագաղթին:*

*Հարցին, թէ հնարաւո՞ր է, որ ընդառաջէ խնդրանքներուն եւ դադարեցնէ հացադուլը, Րաֆֆի Յովհաննիսեան պտասխանեց որ, ունի իր ընելիքը եւ կը շարունակէ հացադուլը այնքան ժամանակ, որքան «մարմինը ներէ եւ Աստուած կամք տայ»:*

*Ի պատասխան այն հարցին, թէ ինչու մարտիմէկեան իրադարձութիւններէն ետք մասնակցեցաւ Սերժ Սարգսեանի երդման արարողութեան՝ այդպիսով օրինականացնելով իշխանութիւնները, Րաֆֆի Յովհաննիսեանը նախ ըսաւ, որ 1995 թուականէն ի վեր կեղծուած են բոլոր ընտրութիւնները, բոլոր նախագահներու օրօք: Ինչ կը վերաբերի յատուկ Սերժ Սարգսեանի, Յովհաննիսեան ըսաւ որ երդման օրը՝ Ապրիլ 9-ին, Ազատութեան հրապարակը փակ էր եւ ժողովուրդը օտարուած էր կեղծիքներով իշխանութեան եկած նախագահէն: Իսկ արարողութեան իր մասնակցութեամբ ինքը ընդամէնը արտայայտած է իր քաղաքացիական վերաբերմունքը: «Ես էլ սեւազգեստ, Մարտի 1-ի զոհերի յիշատակի վայրը այցելելուց յետոյ, մտայ, նստեցի իմ տեղը, մասնակցեցի փաստացի նախագահի այդ արարողութեանը, եւ այդ արարողութեան աւարտին առանց ոեւէ մէկի հետ շփուելու, հեռացայ շէնքից», բացատրեց ՀՀ նախկին արտաքին գործոց նախարար Րաֆֆի Յովհաննիսեան:*

## ԻՐԱՆՑԻՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՆՈՐ ՏԱՐԻՆ՝ ՆՈՎՐՈՒԶԸ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ ԵՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Իրանցիները նշում են իրենց Նոր տարին՝ Նովրուզը: Ցատկանշական է, որ վերջին տարիներին նրանցից շատերն այդ տօնը գերադասում են անցկացնել Հայաստանում: Պարզելու համար, թէ մայրաքաղաքի հիւրանոցների համարների ո՞ր մասն է այս օրերին ամրագրուած իրանցիների կողմից, NEWS.am-ի թղթակիցը զրուցեց հեղինակաւոր մի շարք հիւրանոցային համալիրների ներկայացուցիչների հետ:*

*Ինչպէս յայտնեցին «Անի Պլազա» հիւրանոցից, իրենց մօտ այս օրերին իրանցիների կողմից բաւական շատ համարներ են ամրագրուել: «Ես կ'ասէի՝ գրեթէ բոլոր համարները»,- յայտնեց հիւրանոցի ներկայացուցիչը:*

*«Գոլդեն Թիւլիփ» հիւրանոցի աշխատակցուհին եւս նշեց, որ իրենց համալիրում իրանցիները Նովրուզի օրերին բաւական մեծ թւով սենեակներ են զբաղեցրել: «Կարող եմ ասել, որ նրանց կողմից ամրագրուել է սենեակների գրեթէ 70 տոկոսը: Ընդ որում, համարների ամրագրումն սկսուել է մի քանի ամիս առաջ, որոշ թւով իրանցիներ արդէն իսկ ժամանել են»,- տեղեկացրեց նա:*

*«Գոլդեն փելըս» հիւրանոցային համալիրում էլ, թէպէտ դժուարացան իրանցիների կողմից այս օրերին պատուիրուած համարների կոնկրետ թիւ նշել, սակայն չհերքեցին, որ դրանք բաւական շատ են: «Պարսիկները գերդասում են նուազագոյն վարձավճարով սենեակները, իսկ դա մեզ մօտ 54000 դրամի սահմաններում է»,- ասաց հիւրանոցի ներկայացուցիչը:*

*Գրեթէ նոյն պատասխանները ստացանք նաեւ «Մարիոթ Արմենիա» եւ «Արարատ» հիւրանոցների աշխատակիցներից:*

## ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՀԵՌԱՆՈՒՄ

*Հայաստանի տնտեսական ոլորտում իշխանութիւնների ձեւաւորած հակամրցակցային յարաբերութիւնները շատ ձեռներեցների ստիպում են երկրից հեռանալ ու փորձել յաջողութեան հասնել այլ երկրներում: Նմանօրինակ դժգոհութեամբ «7օր»-ին դիմել է մի ձեռներեց գիւմրեցի:*

*Նա չցանկացաւ հրապարակել իր անունը, քանզի լուրջ մտավախութիւն ունի, որ կարող են իր հետ հաշուեյարդար տեսնել: Գործարարը երկար տարիներ զբաղուել է մրգի առեւտրով ու իրեն բաւական յաջողակ է համարել: Սակայն երբ 2008թ. փորձել է անձամբ էկզոտիկ մրգեր բերել Հայաստան եւ իր ստեղծած ցանցի միջոցով վաճառել, նրան ոստիկանութիւնը բերման է ենթարկել եւ բաց տեքստով ասել, թէ միւս անգամ այդ մասին անգամ մտածել չփորձի.*

*«Ինձ ասացին՝ հո դու Լֆիկ Սամոն չես, որ համարձակւում ես 100 արկղ միրգ բերես Վրաստանից: Համապատասխան մարդիկ կը բերեն, դուք գլուխներդ կախ՝ կը ցրէք իրենց ապրանքը»,-ասել է գիւմրեցի գործարարը:*

*Նրա խօսքերով՝ դէպքից յետոյ իր հետ եղած 2 ընկերը լքել են Հայաստանը. մէկը մեկնել է Իսպանիա, միւսը՝ Ռուսաստանի Դաշնութիւն: Սակայն ինքը մնացել է եւ շարունակել է թելադրուած պայմաններով առեւտուրը, այնքան ժամանակ, մինչեւ որ մրգի շուկայում 2010թ. նոր վերադասաւորումներ եղան.*

*«Շուկայ մտաւ շատ բարձրաստիճան պաշտօնեաններից մէկի եղբայրը ու հիմա մեզ ստիպում է իր համար աշխատել: Ես էլ զզուած թողեցի ու դուրս եկայ: Չեմ ուզում ուրիշի ճորտ ու իրենց համար ոսկէ հաւկիթ ածող հաւ լինել: Ուզում եմ անձամբ գնալ, ապրանքը բերել ու վաճառել, առաւել եւս՝ ես էդ հնարաւորութիւնն ունեմ: Բայց չեն թողնում, հասկացնում են. «Ընտանիքիդ ու քո ձեռքը հո կրակը չե՛ս ընկել»: Ասում են՝ ապրի: Կարող է մի քիչ էլ աւել տան, որ ասենք մեքենայ առնես, դրանից աւել ունենալու հնարաւորութիւն չեն տալիս:*

*Հայաստանը ընտանիքով առաջիկայում լքել պատրաստուող գործարարը յայտարարել է.*

*«Հիմա ուզում եմ, որ բոլորն իմանան, որ ես Հայաստանը լքում եմ նման կեղտոտ յարաբերութիւնների եւ այստեղ իմ երեխաների համար հեռանկար չտեսնելու պատճառով: Եւ երբ ես անվտանգ հեռաւորութեան վրայ եղայ Հայաստանի շատ բարձրաստիճան պաշտօնեաներից, որոնք մոնոպոլիզացրել են այդ բիզնէսը, պատրաստ եմ նորանոր փաստեր հրապարակել այդ ոլորտում տիրող սարկտերական ու կեղտոտ բարքերի վերաբերեալ:*

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

# ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՁՐՈՅՑ
# Ո՞Վ Է ՁՈՀԸ ՋԵՐՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

**ՋԱՒԷՆ ԽԱՆՃԵԱՆ**

*Հայաստանի Երրորդ Հանրապետութեան ստեղծման եւ անկախութեան քսանամեակի սեմին, գաղտնիք չէ այլեւս, թէ սփիւռքահայը կորսնցուցած է անկախութեան առաջին տարիներու շրջանին իր ապրած աննախընթաց խանդավառութիւնը եւ անակնկալ երջանկութեան երազային փորձառութիւնը:*

*Ազգային ողբերգութիւն է արդարեւ գիտակցիլ, թէ Եղեռնէն ճողոպրած զանգուածներու աշխարհասփիւռ տարտղնուած ժառանգորդներու, տասնամեակներու իրականացած երազ ու յուսացած ապաւէն՝ անկախ հայրենիքը, այսօր կորսնցուցած է իր քսանամեայ հմայքը եւ ողջամիտ ու անշահախնդիր հոգատարութեան կեդրոնը ըլլալու ուշադրութիւնը:*

*Ահաւո՜ր, ահաւոր ողբերգութիւն:*

*Կասկածէ վեր է, թէ դարաւոր հայրենիք, պապենական օճախ եւ մարդկային աներեւակայելի կորուստի փորձառութիւնը ապրած Սփիւռքը իր քաշքշուող գոյապատճառի եւ գոյապայքարի տրամաբանական եւ միակ բացատրելի կրակի ճարճատումը վառ պահած էր՝ ի՛ր իսկ երազած անկախ Հայաստանի մը իրականութեամբ: Եւ այդ իրականութեան յոյսի խարիսխը հանդիսացած է անկասկած, նոյնինքն, պատմական Հայաստանէն փրկուած վերջին կռուան՝ Սովետական Հայաստանը:*

*Զարմանալի չէր, ուրեմն, հակառակ անակնկալին եւ հակառակ Սփիւռքի կամքէն ու ջանքերու հետեւողականութեան ծիրէն դուրս ստեղծուած անկախ հայրենիքի մը առթած գինարբուքի մթնոլորտը Սփիւռքահայութեան մասսաներու համատարած գիտակցութեան մէջ:*

*Աւելորդ եւ անօգտակար է այստեղ պատմականը ընել քսան տարիներու վստահութեան շարունակուող սայթաքումին, փաստը այն է սակայն թէ այսօր, մեծ թիւով հաւատաւոր հայորդիներ, որոնք ապրեցան անկախութեան վերոյիշեալ խրախճանքը, եթէ դուրս իսկ չեն ազգային մտահոգութեան բերդի պարիսպէն, ապա նուազագոյն պատնէշի վրայ են:*

*Զպիտի փափաքէինք այլոց անունով եւ կողմանէ յայտնութիւններ ընել: Ճշմարտութիւնը սակայն մեզ կը մղէ համարձակիլ ըսելու, թէ երկրաշարժի ուժգնութիւնը ունեցող անակնկալ քայլեր՝ առնուած ամէնաազնիւ ոգիով լեցուն Սփիւռքահայ մեծահոգի հայորդիներու կողմէ, դժուար է հեռու պահել յուսահատութեան եւ յուսալքութեան կասկածանքի բացատրութենէն, որքան ալ անուղղակի աղբիւրներու կողմէ հերքուին անոնք:*

*Հրճուանքով եւ խոնարհութեամբ, եղած ըլլալով հայրենիքի ծառայութեան դաշտին մէջ, ապրած եմ մեր ժողովուրդի զաւակներու զոհաբերող ոգիին, անանձնասէր սիրոյն եւ ինքնազոհ մատուցումի սաւառնող ալիքներուն վրայ: Ամէնօրեայ հայ կեանքի շօշափելի կապերու իբրեւ արդիւնք, ցաւով պէտք է հաստատել, թէ այդ երանելի ալիքները այսօր ծովափի վրայ պղպջակներու վերածուած՝ անյայտ կը փշրուին:*

*Ամբաստանեալ փնտռելու մղումէն տառապող փորձ մը չէ սրտի խորերէն բխած այս անդոհանքը: Բոլորս ենք պատասխանատու եւ բոլորս ենք հաշուետու: Հայրենի իշխանութիւններէն սկսած մինչեւ վերջին սփիւռքահայը: Եւ ես վստահ եմ, որ երկուստեք սակաւաթիւ չեն անոնք, որոնք կը տառապին այս անբաղձալի կացութենէն:*

*Հայ ժողովուրդի երկու թեւերուն մէջ ալ հանճարեղ, փորձառու, բազմատաղանդ, զարգացած, ազնիւ եւ բազմաթիւ մարզերու մէջ գերկարողութեան տէր զաւակներու շարանը արհամարհելի թիւ մը չէ: Առ այդ, մեր նորանկախ հայրենիքը ունէր երաշխիքը եւ ներոյժը՝ կանգնած այդ ուժերու կարողականութեան պատուանդանին վրայ՝ ըլլալու քաղաքակիրթ եւ զարգացած, աշխարհի ուշադրութիւնը գրաւող յառաջադէմ փոքր հանրապետութիւններէն մին: Փոխարէն՝ յետ անկախութեան Հայաստանը ուղղուեցաւ դէպի ետ՝ հանդիսանալու միջին դարերու աւատապետական էութիւններէն մին, ստրկացնելով հայրենի ժողովուրդը քաղաքականապէս, տնտեսապէս եւ ընկերային դասակարգերու ակնյայտ բաժանումով:*

*Տակաւ առ տակաւ, Շարայի որկորները փայփայող տիրական խաւ մը ապօրինի միջոցներով, զեղծարարութեամբ եւ բռնութեամբ, մեր երկիրը հասցուցած է յուսահատութեան գիրկը: Օրէնքի իշխանութեան կամայապաշտ ենթարկումով, արդար եւ ազատ մրցակցութեան անձնամոլ բացառումով, հեռատեսիլի ազատ կայաններու կոպիտ կաշկանդումով, քաղաքական ընդդիմադիրներու քմահաճ կալանաւորումով ու զգայացունց ոճիրներու ամօթալի քօղարկումով, գոռոզ «տղամարդերու» փոքրոգի խաւ մը ստրկացուցած է ամբողջական հայութեան պատկանող պատմական հայրենիքի երկնուած հողը՝ զայն վերածելով աւանդապահ տարածքի մը:*

*Եւ հակառակ այս հոլովոյթին, մղուած մեր նահատակներու սրբազան կտակներէն ու հաւատալով, որ Ցեղասպանութեան խաչելութեան յաջորդող յարութեան մխիթարանքն է սրբազան մեր հայրենիքի անկախացած այս տարածքը՝ Սփիւռքահայը մինչեւ այսօր շարունակած է նպաստել հայրենիքի հզօրացման վեհ աշխատանքին, գիտակցօրէն անտեսելով կուտակուած եւ պարտադրուած անարդարութիւնն ու տիրող անձնապաշտ կարգերը:*

*Հայրենասիրութեան այս մակարդակի պարզամտութիւնը, սակայն, այլեւս սպառնալիք է մեր ժողովուրդի բարօրութեան եւ հայրենիքի ապահովութեան ու ապագային:*

*Ինքնախաբէութիւն է Սփիւռքի լռութեան եւ «աչկապուկ»ի քաղաքականութիւնը՝ քաղաքավարութեան սիրոյն եւ յարգանքի պիտակին տակ: Եթէ ուշ չէ, ժամանակն է զարթնելու մեզի սպառնացող վտանգներուն դիմաց եւ գիտակցելու, թէ արմատական փոփոխութիւններու բացակայութեան պարագային, Միջին Արեւելքի մէջ ժայթքող ժողովրդային յեղափոխութեան ալիքը երկրագունդի տարածութեան վրայ արդեօք չ՛ուղղուի՞ր ամէն կողմ, որ անկ է:*

*Ամէն գնով պէտք է հեռու մնալ այդ ալիքներու աննախատեսելի հետեւանքներէն:*

*Ջերմ հայրենասիրութիւնը իմաստազուրկ է առանց զուգընթաց խղճամիտ, արդար, անհրաժեշտ եւ խիզախ քննադատութեան եւ արմատական փոփոխութիւններու ղօղանջող պահանջին:*

*Մեր հայրենիքը վեր պահենք մեր հաւաքական սիրոյ մատուցումի բագինէն:*

## ՄՏԱԾԵԼ, ԹԷ ՀԱՒԱՏԱԼ. ԱՅՍ Է ԽՆԴԻՐԸ

*Շարունակուածէջ 2-էն*

*ամէն, ապա գրեթէ ամէն երկրորդ ելոյթ ունեցողը պնդէր կամ խնդրէր, որ պէտք է հաւատալ ու վստահել Տէր-Պետրոսեանին:*

*Ինչու է առաջացել այդ կասկածը, որ կարող են այլեւս չհաւատալ ու չվստահել: Իսկ եթէ կասկած չկայ, ապա ինչու մի հանրահաւաքում մի քանի անգամ անդրադառնալ այդ խնդրին: Իսկ գուցէ աւելի լաւ է, որ հասարակութիւնը հաւատայ ու վստահի մտածելով միայն: «Զտեսնելով» հաւատալու համար միգուցէ բաւական է Քրիստոսը, իսկ մարդուն, ով էլ որ այն լինի, պէտք է հաւատալ «տեսնելով», «շօշափելով», մտածելով, հարցնելով, պատասխան պահանջելով, Նրա քայլերը քննութեան առնելով, կասկածելով:*

*Թէեւ, շատերի համար իհարկէ հաւատի այդ տարբերակն այդքան էլ ցանկալի չէ, քանի որ այդպիսի հիմքեր ունեցող հաւատը բաւական պահանջկոտ է դառնում: Այդ իսկ պատճառով է, որ քաղաքականութեան մէջ առաւել մեծ տարածում ունի կոյր հաւատի պարտադրանքը, երբ հարցը դրւում է հետեւեալ կերպ՝ կամ հաւատում ես առանց աւելորդ հարցերի, կամ մենք քեզ կ՚ոչնչացնենք:*

Ազգային Երգերու Երեկոյ
Կազմակերպութեամբ՝
ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Նուիրուած՝
*մասսաներու*
Կայծ Երիտասարդական Միութեան
100 ԱՄԵԱԿ-ին
Երեկոն պիտի խանդավառէ Լոնտոնէն սիրուած Երգիչ՝
ՍԱՄՈՒԷԼ ՎԱՐԴԱՆԵԱՆ
Տեղի կ՚ունենայ Շաբաթ՝ Ապրիլ 9, 2011 երեկոյեան
ժամը 8:30-էն սկսեալ Հ.Մ.Մ.-ի Կարօ Սողանալեան
սրահէն ներս, հասցէ՝ 1060 N Allen Ave. Pasadena
1887
Տոմսերու համար հեռաձայնել
(323) 592-9880
Մուտքի նուէր $35.00

## ՌԻՉԸՐՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
## «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՐՔՄԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՄԵԹՈՏԸ ԴՐԱ ԱՂԱՒԱՂՈՒՄՆ ՈՒ ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆ Է»

***ԼՈՒՍԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ***
***ԼՈՆՏՈՆ***

*«Թուրքական ժխտողական քաղաքականութեանը հակադարձելը խլում է մեր ներուժի ու գումարների 80 տոկոսը, որ կարող էինք ծախսել արուեստի ու զարգացման վրայ», - Լոնտոնում հայ ուսանողների հետ հանդիպման ժամանակ ասաց Լոս Անճելըսի Գալիֆորնիայի համալսարանի (UCLA) հայագիտութեան ամպիոնի ղեկավար Ռիչըրտ Յովհաննիսեանը:*

*Պրոֆեսոր Ռիչըրտ Յովհաննիսեանը Լոնտոնում էր՝ պատմելու Արեւմտեան Հայաստան կատարած իր ճամբորդութեան մասին, ներկայացնելու այդ թեմայով գրած գրքերն ու խօսելու Հայոց ցեղասպանութեան հարցի ճանաչման ու ժխտման թեմայով:*

*«Թուրքիան մեզ ընտրութիւն չի թողել: Կամայ-ակամայ ստիպուած ենք պայքարել Թրքական քարոզչութեան դէմ: Ու որքան էլ ցեղասպանութեան մասին տեղեկացուածութիւնն աճում է, ապատեղեկատուութիւնն էլ նոյնքան աւելանում է», - ասաց Ռիչըրտ Յովհաննիսեանը՝ յաւելելով. - «Հայկական դեսպանատները թոյլ են ու պասիւ ամէն տեղ: Եթէ Թրքական դեսպանատների կայքերը նայէք, անմիջապէս կը գտնէք ցեղասպանութեան իրենց մեկնաբանութիւնը. Նրանք ակտիւ քարոզչութիւն են անում, իսկ հայկական կողմը թերանում է, ինչը, իմ կարծիքով, տխուր է»:*

*Նրա խօսքով՝ ցեղասպանութեան հերքման նորագոյն մեթոտը դրա աղաւաղումն ու արդարացումն է: Չկարողանալով լիովին հերքել Ջարդը՝ Թուրքերը, ինչպէս Ռիչըրտ Յովհաննիսեանն է ասում, ռացիոնալացնում են ցեղասպանութիւնը՝ բացատրութիւններ տալով եղելութեան համար. - «Նրանք ընդունում են՝ այո, ցաւօք, 200 հազար հայ է մահացել, բայց պատերազմ էր: Նուազեցնում են զոհերի թիւը, մէջտեղ են բերում պատերազմական իրավիճակը, հայերի կողմից ապստամբութիւնները ու պնդում են, որ այդ ամէնի մէջ միտում չի եղել, քանի որ ցեղասպանութիւնը պահանջում է միտում: Նաեւ դնում են համեմատութեան մէջ միւս զոհերի հետ, ասում են՝ պատերազմ էր, բոլորը զոհեր ունեցան՝ Թուրքերն էլ, հայերն էլ, արաբներն էլ, բրիտանացիներն էլ, ինչո՞ւ պիտի խօսենք 200 հազար հայերի մասին: Նոյնը ասում են հրէական Հոլոքոսթը հերքողները»:*

*Ամէն դէպքում, ընդգծեց պատմաբանը, այս գործընթացը քայքայիչ է երկու կողմի համար. հայերը չեն ազատւում զոհի հոգեբանութիւնից, Թուրքերը շարունակում են ապրել իրենց ստեղծած միֆի մէջ:*



*«Ինչպէս խորհրդային պատմութիւնն էր յօրինուած, այնպէս էլ Թուրքերինն է: Ու սերունդներ շարունակ նրանք դասաւանդում ու սերմանում են այդ: Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ ժողովուրդը կարողացաւ գահընկէց անել հերոսներին, քանդել Ստալինի, Լենինի արձանները, մոռանալ միֆերը: Թուրքերի դէպքում՝ Աթաթուրքի նկարն ամէն քայլափոխին է, նրանք չեն կարող ընդունել, որ Քեմալի թիմը կազմուած էր մարդասպաններից, քանի որ Քեմալն այսօր կիսաստուած է Թուրքիայում: Իսկ հնարաւո՞ր է ազատուել միֆից՝ առանց այդ աստծուն գահընկէց անելու», - ասաց Ռիչըրտ Յովհաննիսեանը:*

*Նա 1915 թուականը չի համարում հայերի գոյութեան հիմնաքար, բայց կարեւորում է, որ ամէն հայ իր ինքնութիւնն ու պատմութիւնը ճանաչի:*

*Իր անձնական օրինակի մասին խօսելով՝ հայագէտն ասաց, որ շատ ուշ է բացայայտել ընտանիքի պատմութիւնն ու հետաքրքրուել դրանով: Հիմնական պատճառը գլոբալացուած ամերիկեան միջավայրն էր ու այն, որ ցեղասպանութիւնից փրկուած ծնողները փորձում էին մոռանալ անցեալն ու բոլորովին նոր կեանք սկսել: Սակայն ի տարբերութիւն իր սերնդի՝ Սփիւռքի յաջորդ սերունդն աւելի հաստա-*

*Շար.ը էջ 7*



## ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԿՌԻՒՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ԳՐՈՂԸ

*Ուրիշ ազգերու կարգին, մեր ազգի պարագային եւս հայ գրողները մասնակից եղած են ազգին ու հայրենիքին ճակատագիրը վճռող բախտորոշ կռիւներուն կամ պատերազմներուն:*

*Որպէս արտայայտիչը ժողովուրդի ազատութեան ձգտումներուն եւ երազներուն՝ նոյնացած են ժողովուրդին հետ կռուելով հայրենի հողի պաշտպանութեան եւ անվտանգութեան համար, իրենց հաւատքին պաշտամունքը վառ պահելու համար, հայ գիրն ու մշակոյթը յաւերժացնելու համար: Սրբազան խորհուրդներ, որոնք շաղախուած հայութեան կենսահայեցողութեան հետ, դարերու պատմութիւնը կերտած են լուսաւոր եւ հերոսական էջերով:*

*Առաջին օրինակը կու գայ Վարդանանց պատերազմի դիւցազներգակէն, բանաստեղծ-պատմիչ Եղիշէէն, որ որպէս Մամիկոնեան Վարդանի քարտուղարը, պատերազմի մասնակիցն ու ականատես վկան, պատերազմէն ետք մենակեացութեան եւ ճգնութեան տուաւ ինքզինք՝ Ռշտունեաց գաւառի ծովեզերքին քարայրի մը մէջ առանձնանալով կը գրէ Վարդանանց պատերազմի պատմութիւնը: Եղիշէի պատմութիւնը ոչ միայն վաւերագրական աղբիւրի արժէքով կը յատկանշուի, այլեւ՝ ներշնչումի գիրք կը դառնայ յետագայ դարերու ազատագրական կռիւներու համար:*

*Վարդանանց պատերազմէն մինչեւ Ղարաբաղի ազատագրութեան կռիւները՝ հայ մարտիկ գրողներու անուններ արձանագրած է մեր գրականութիւնը, որոնք պատմական, յուշագրական, գրական-ստեղծագործական գործեր պարգեւած են մեր գիրի պատմութեան:*

*1915-ը կանխող տարիներու ազատագրական կռիւները իրենց գեղարուեստական արտայայտութիւնը գտան Դանիէլ Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբէն Սեւակի եւ Ռուբէն Զարդարեանի ստեղծագործութիւններուն մէջ:*

*Երկրորդ համաշխարհային պատերազմը, որուն մասնակից դարձաւ նաեւ մեր հայրենիքը, բազմաթիւ գրողներ զինուորագրուեցան եւ կռուեցան գերմանական ներխուժող բանակներուն դէմ: Պատերազմին մասնակցածներէն շատեր գրեցին պատերազմի իրենց փորձառութիւններուն մասին գեղարուեստօրէն ապրեցնելով անոնց մարդկային, հայրենասիրական անդրադարձերուն հետ, անձկութեան եւ սարսափի հոգեբանական պահերն ու հոգեվիճակները մարդկայնական խորքի մը յենած:*

*Մեր գրականութիւնը ապրող էջեր ունի պատերազմի տարիներու կեանքէն, որոնք մինչեւ օրս հետաքրքրութեամբ կը կարդացուին:*

*Վերջինը Ղարաբաղն էր: Կարդանք Գրիգոր Ջանիկեանի յատկանշական մէկ վկայութիւնը. «Ա՛յս պատերազմին, սակայն, մասնակցում են ոչ այնքան հրթիռակայանքները, որքան գրողների գիրքերը: Գրողների, որոնք ազատամարտի տարիներին շրջանցեցին մահուան վտանգն ու սարսափը, ականատես եղան, ոմանք նոյնիսկ մասնակցեցին ռազմական գործողութիւններին ու իրենց փաստագրութիւններում ճշմարտութիւնը յանձնեցին պատմութեանը: Պատմութեան արդարութեանը»:*

*Այդ գիրքերէն մէկն է Նուարդ Սողոմոնեանի գիրքը «1991 Կոլցոյ»: Գրախօսականի տողերէն միայն կը ծանօթանանք գիրքի բովանդակութեան մէջ գրուած պատմական ճշմարտութեան:*

*Դարձեալ հարց տանք՝ ե՞րբ Սփիւռք պիտի հասնի նման գիրքեր:*

*Պ.Ս.*

## ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՐՔՄԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՄԵԹՈՏԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*տակամ է իր ազգային ինքնութեան հարցում: Որպէս օրինակ՝ Ռիչըրտ Յովհաննիսեանը նշեց իր որդուն՝ «Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Րաֆֆի Յովհաննիսեանին. - «Հիմա արդէն մեր ընտանիքի երրորդ սերունդն Արեւելեան Հայաստանում է: Րաֆֆի Յովհաննիսեանը մի քանի օր է՝ Երեւանի Ազատութեան հրապարակում հացադուլ է անում: Դուք գիտէ՞ք Րաֆֆի Յովհաննիսեանին: Նա Ազատութեան հրապարակում է, ինչ օգուտ՝ չգիտեմ, եւ ինչ պիտի լինի՝ չգիտեմ»:*

*Աւելին ասել Հայաստանի ներքին ու նաեւ արտաքին քաղաքականութեան մասին՝ Ռիչըրտ Յովհաննիսեանը հրաժարուեց:*

*Իսկ հայ-թրքական յարաբերութիւնների առիթով նա սահմանափակուեց մի նախադասութեամբ. - «Այո, մենք պիտի կարգաւորենք մեր յարաբերութիւնները Թուրքիայի հետ, բայց ոչ իմ յիշողութեան գնով»:*

## ՅԱՂԹԱՆԱԿԻ ԴԱՐՁԵՐԵՍԸ

***ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿԵԱՆ***

Ծ. Խ. Հայրենի ծանօթ գրող եւ ժուրնալիսթ Գրիգոր Ջանիկեանի գրութիւնը, որ տպուած է «Գրական Թերթ»ի 10 Հոկտեմբեր 2010 համարին մէջ, գրախօսութիւնն է ղարաբաղցի գրագիտուհի Նուարդ Սողոմոնեանի «1991 Կոլցոյ» վաւերապատումին: Վաւերապատումը ղարաբաղեան ազատամարտի քաջագործութիւններուն հետ կը վկայագրէ թուրք-ազերի ջարդարարներու անսիրտ վայրագութիւններէն սրտաճմլիկ դրուագներ:

Գրախօսականին մէջ մէջբերուած են երեք դրուագներ, որոնք կը ցոլացնեն ազերիներու գործած արարքներուն գազանային ամբողջ հրէշութիւնը:

Օտարերկրեայ լրագրողը, չիմանալով, որ դա ռազմական գաղտնիք է, կամ ո՞վ գիտէ, թերեւս յատուկ դիտաւորութեամբ,

*Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարին հարցնում է, թէ որքան զինուոր ունի իր բանակը:*

*Նախարարը, առանց երկմտելու, պատասխանում է.*

*- Հարիւր քառասուներկու հազար...*

*Առայժմ այդքան հայ է բնակւում Արցախում:*

*Այդ զինուորներից մէկը Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի գրողների միութիւնների անդամ, Լեռնային Ղարաբաղի կառավարութեան Եղիշէի անուան պետական մրցանակի դափնեկիր Նուարդ Սողոմոնեանն է:*

֍֍֍

*Միայն թէ չասէք, թէ պատերազմը վերջացել է: Որքան էլ զգօն լինեն մեր ռազմական գրաքննիչները, լրատուամիջոցների հաղորդագրութիւններում սպրդում են տեղեկատուութիւններ հրադադարի պարբերական խախտման, երկկողմ զոհերի, ընդհուպ միջազգային բարձրագոյն խորհրդաժողովներում փոխանակուելիք, գիջուելիք տարածքների մասին: Ա՛յս պատերազմին, սակայն, մասնակցում են ոչ այնքան հրթիռակայանքները, որքան գրողների գրքերը: Գրողների, որոնք ազատամարտի տարիներին շրջանցեցին մահուան վտանգն ու սարսափը, ականատես եղան, ոմանք նոյնիսկ մասնակցեցին ռազմական գործողութիւններին ու իրենց փաստագրութիւններում ճշմարտութիւնը յանձնեցին պատմութեանը: Պատմութեան արդարութեանը:*

֍֍֍

*Վաւերագրքերում, կենսագրականի հետ հրապարակում է իր վաղ տարիների լուսանկարները: Յուշելու համար երեւի, թէ որքան առինքնող, հրապուրիչ աղջիկ է եղել: Արցախի բոլոր աղջիկներն են առինքնող ու հրապուրիչ, նրա հայեցքում սակայն իւրօրինակ անրջանք կայ: Այդ անուրջներով է նա ոսկէ մեդալով աւարտել հայրենի գիւղի միջնակարգ դպրոցը, ապա Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան մանկավարժական համալսարանի բանասիրական կրթաճիւղն ու բնօրրանն է վերադարձել, որ... ռազմական թղթակից դառնայ: Ես չգիտեմ, «Ազատ Արցախ» պաշտօնաթերթում, որտեղ աշխատանքի է անցել, խմբագիրն է յանձնարարել պատերազմի այդ՝ թերեւս ամենաողբերգական էջի լուսաբանումը, թէ ինքնակամ, անձնական նախաձեռնութեամբ է նախընտրել. էականն այն է, որ մինչեւ այժմ էր անհնար է առանց սոսկումի կարդալ նրա «1991, «Կոլցոյ» գրքի 1-ին, 2-րդ պրակները, «Ցիշողութեան դատը», միւսները:*

*Նուարդ Սողոմոնեանն ամբողջ ստեղծագործական կեանքը նուիրաբերել է հայ ռազմագերիների ու պատանդների ճակատագրերի վաւերագրմանը:*

*Նրա երազկոտ հայեացքին ես հաճոյախօսութեան միտումով չանդրադարձայ: Պատկերացրէք, թէ ինչպէս է այդ քնքուշ, նուրբ լրագրողուհին Ստեփանակերտից մարտադաշտ, զինուորական հիւանդանոց, փլատակուած շէները հասնում, ատրպէյճանական բանտերից նոր վերադարձած, հիմնականում փոխանակուած ռազմագերիներին ու պատանդներին հանդիպում:*

*Նրանք՝ այդ խեղուած մարմիններով, յաճախ նաեւ խեղուած հոգեկանով տղամարդիկ ու կանայք, իմանալով Նուարդի նպատակը, մթագնում են: Իրենք մինչեւ իսկ ամենամօտ հարազատներին չեն պատմում, թէ ինչ կտտանքների են ենթարկուել ատրպէյճանական տանջարաններում, մի դրուագն անգամ վերյիշելիս ցնցւում, ջղաձգւում են, լրագրողուհու հետ ինչպէս կխօսեն: Ընդ որում, այն բանի համար, որ իրենց ստորացումների ու նուաստացումների մասին գրուի, հրապարակուի, աշխարհն իմանայ: Դժուար է ասել, թէ ինչպէս, դա հաւանաբար մասնագիտական գաղտնիք է, բայց*

*Շար.ը էջ 18*



*Լիբանանի երկարատեւ ներքին պատերազմէն փախչելով Մոնթրէալ հասանք: Տիւփլեքսի մը վերի յարկը վարձելով սկսանք մեր կեանքը դասաւորել, օգնութեամբը մեզմէ առաջ հասած բարեկամներու: Հակառակ տկար յիշողութեանս եւ անցած 22 տարիներուն՝ չեմ կրնար մոռնալ ձիւնի առատութեան պարգեւած հաճոյքը իբրեւ առաջին տպաւորութիւն: Բարի գալուստ մաղթելու համար այցելութեան եկած էին քանի մը բարեկամներ: Տունը տակաւին լիուլի կահաւորած չէինք եւ իմիջի այլոց, սառնարան չէինք գնած: Ձիւնի այդ առատութեան մէջ սառնարանի պէտքը երկրորդական կը թուէր: Այդ օրը որ մեր առաջին այցելուները պիտի հիւրընկալէինք, Հոկտեմբեր 17 էր, բայց պատշգամը արդէն լեցուած էր ձիւնով, որմէ օգտուեցանք մեր ուիսքիի բաժակները պաղեցնելու համար: Ատկէ ի վեր, անցնող 22 տարիներուն, առ ի գոհունակութիւն մեր ձիւնակարօտ աչքերուն, ձիւնի կարօտ չմնացինք: Ամբողջ երեք-չորս ամիս հողը ձիւնի տակ կը հանգչի, գարնան կանաչով պոռթկալու համար: Մանաւանդ այս տարի պարտէզս աւելի քան մէկ մեթր ձիւնով ծածկուած է՝ հրապուրիչ միջավայր մը ներկայացնելով բեւեռային արջերուն: Ամառնային գործածութեան համար դրուած սեղանը կորսուած է ձիւնի տակ:*

*Այս կլիմային գիտակցութեամբ է որ գանատական կառավարութիւնը հոգածու է բնակչութեան հանգիստին՝ առատ ելեկտրականութեամբ, ջեռուցման դրութեամբ եւ ամառնային տաքին դէմ ալ զովացնող օդափոխիչ դրութեամբ: Սակայն, հակառակ պետական հոգածութեան անվճար բժշկական խնամքին, անգործութեան վճարումին, ծերութեան թոշակին եւայլն, Եւրոպայէն աւելի մեծ (բացի Ռուսիայէն) այս երկրին բնակչութիւնը 30 միլիոնը չէ անցած: Այս ծայրայեղ կլիմային տոկալու անկարող ծեր բնակչութիւնը մեծ մասամբ ցրուած է տաք կլիմայ ունեցող շրջակայ երկիրները:*

*Ամէն պարագայի տակ քիչին եւ շատին լուծումը կայ օրինակ, Լիբանանի մէջ Պէյրութի ձիւնակարօտ ժողովուրդը կուշտ ու կուռ ձիւնը վայելելու համար մինչեւ Սաննին կ՚երթար: Իսկ Մոնթրէալի ձիւնէն զզուած ժողովուրդն ալ շրջակայ տաք երկիրները կ՚երթայ Ֆլորիտայէն մինչեւ Գուպա:*

*Բայց Ապրիլէն մինչեւ Սեպտեմբեր ես պիտի չուզէին որեւէ տեղ երթալ, որովհետեւ իմ ապրած երկիրներս որեւէ մէկը չունի այս հաճելի կլիման եւ միջավայրի գեղեցկութիւնը, որ Մոնթրէալը ունի իր մաքուր օդով, ծառախիտ անտառներով եւ կանաչապատ փողոցներով:*

*Քիչին հարցը լուծելը դիւրին է: Ձիւնի կարօտ ունեցողները կրնան նոյն երկրին մէջ կարճ ճամբորդութիւնով մը հասնիլ ցանկալի ձիւնին, մինչ շատը հալեցնելն ու չքացնելը անկարելի է, մինչեւ որ բնութիւնը գործի չլծէ արեւը:*

*Ձիւնի առատութենէն տառապող Գանատայի սառցապատ տարածութիւններուն հայթայթելիք ջուրին կարօտ որքա՜ն երկիրներ ու ժողովուրդներ կան, որոնք երաշտէ կը տառապին:*

*Ներկայ թեկնոլոճիով հպարտացող մարդկութեան համար ահա՛ մարտահրաւէր մը՝ շատով քիչին պակասը լրացնելու համար:*

***

*Ջուրին պէս շատ բաներու քիչին ու շատին տարբերութիւնը մարդկութեան մեծագոյն հարցերէն մէկն է՝ տառապանքի, դժգոհութեան, ըմբոստութեան եւ պատերազմներու պատճառ ըլլալով: Հետեւաբար, մարդկութեան խաղաղութեան եւ երջանկութեան համար անհրաժեշտ է քիչին եւ շատին տարբերութիւնը նուազեցնելու եւ նոյնիսկ հաւասարեցնել՝ համերաշխ աշխարհ մը ունենալու համար:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net



# ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ



Գէորգ Քանանեան Ազգային Դպրոցը

ԳՐԻՇ ԴԱՒԹԵԱՆ

Եթէ ընտանիքի սնուցման ջերմ գիրկը ծնողներն են, ապա հասարակութեան սնուցման, դաստիարակութեան, գործնական կեանքը ապրել ուսուցանող ջերմ գիրկը դպրոցն է: Ուսման հանդէպ հայ ժողովուրդը միշտ էլ ունեցել է մեծ հաւատք ու նուիրում: Նման աւանդութեամբ էլ օժտուած է եղել Նոր Ջուղան իր հիմնարկման օրերից, 17րդ դարի սկզբից, Իրանի այն օրերի քաղաքամայր Սպահանի հարաւում, Զայանդերուդ գետի աջ ափին: Նոր Ջուղայի ժողովուրդը, որ հիմնականում Նախիջեւանեան



Կատարինեան սրահ

Ջուղայից գաղթեցուած հայութիւնն է եղել, գաղթի տանջալից աղէտի միջից անցնելով, կարողացել է համեմատաբար կարճ ժամանակամիջոցում վերականգնել իր հասարակական կեանքը Նոր Ջուղայում:

15րդ դարից ի վեր Ջուղան յայտնի է դառնում հարաւ արեւմտեան Կովկասում որպէս վաճառականական, մշակութային եւ կրթական կենտրոն: Ջուղայի հայ վաճառականները ազդեցիկ մաս են կազմում Իրանի, Հնդկաստանի, Եւրոպայի եւ Ռուսաստանի միջեւ շրջանառուող առեւտրի, ոչ միայն մետաքսի տարածման, այլ նաեւ բազմատեսակ ապրանքների արտահանման ու ներածութեան աշխատանքում: Ջեռներէց վաճառականները եղել են կրթուած, բանիմաց, լեզուներ իմացող գործարարներ, որ նիւթապէս զօրանալով, ուժեղացրել են նաեւ իրենց հասարակութեանը, ժողովրդին: Պատմական իրականութիւն է, որ հայ վաճառականները մարտավարական ազդեցութիւն են ունեցել բրիտանական եւ հոլանդական կայսրութիւնների մրցակցութեան պայքարում, հարաւ արեւելեան ասիական տարածքներում, ի նպաստ բրիտանական ապերախտ կայսրութեան:

Ջուղայի հայութիւնը հաստատուելով Նոր Ջուղայում հասարակական կեանքի, ապրուստի զարգացած իմացութեամբ կարգաւորել է իր կեանքը, իր ազգային հասարակական կեանքի պայմաններն է հաստատել ու թրծել Նոր միջավայրում: Առաջնահերթութեամբ կառուցել է իր վանքը՝ Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքը ու եկեղեցիները, որ ժամանակի ընթացքում թիւը հասել է 24ի. դրանց հետ, ու դրանց մէջ էլ հաստատել է իր դպրոցները: Հայաշխարհի տարածքներում, ի վաղուց անտի, աւանդաբար, վանքերում եւ եկեղեցիներում են եղել դպրոցները, ուսումնարանները, համալսարանները:

17րդ դարից սկսած հայ հասարակութիւնը Նոր Ջուղայում ըստ իր որակի հասկացողութեան, առաջանում է նոյն աւանդութեամբ: 1620 թուին Նոր Ջուղան արդէն կենտրոնն էր Իրանա-Հնդկաստանի Հայոց Թեմի. օրուայ թեմակալ առաջնորդ Խաչատուր Արքեպիսկոպոս Կեսարացին քննարկում է վանքի դպրոցի ուսումնական ծրագիրը, բարեփոխում, ժամանակի բարձր մակարդակի է հասցնում. ուր ներառում է՝ հայերէն, պարսկերէն, անգլերէն լեզուները, գրականութիւն, բանաստեղծութիւն, երաժշտութիւն, թուաբանութիւն «համարողական արուեստ», քերականութիւն, փիլիսոփայութիւն,



Ազգային Կենտրոնական Դպրոցը

բնական գիտութիւններ, աստուածաբանութիւն եւ այլն, որոնց պարապումը լինում է հայերէնով: Դպրոցը կոչւում է համալսարան: Այդ համալսարանում են ուսանել յայտնի դէմքեր՝ Յակոբ Դ Ջուղայեցի Կաթողիկոսը, փիլիսոփայ Սիմէոն Ջուղայեցին, Աստուածաշնչի տպագրիչ Ոսկան Երեւանցին, Ջուղայի յայտնի առաջնորդներ՝ Դաւիթ եւ Ստեփանոս եպիսկոպոսները, մեծ գիտնական Յովհաննէս Տիեզերալոյս Վարդապետը եւ ուրիշներ: 17րդ դարի վանքի դպրոցի յայտնի ուսուցիչներից է Կոստանդ Վարժապետը, նա 1687 թուին կազմել է «Բանք ի պէտս վաճառականաց» դասագիրքը, ապա բովանդակութիւնը ընդարձակելով կազմել է «Աշխարհաժողով» դասագիրքը: Ահա նման օրինակները ցոյց են տալիս, որ Ջուղայի եւ Նոր Ջուղայի յայտնի վաճառականները յաջողել են իրենց ասպարէզում կրթուած, բանիմաց ու զարգացած գործարարներ լինելով:

Նոր Ջուղայի եկեղեցիներում եղած դպրոցները կատարել են նախակրթարանի ապա միջին մակարդակի ուսումնատւութիւնը: Եկեղեցիների դպրոցներում սովորել են տղաները. իսկ աղջիկները սովորել են Կուսանաց Սբ. Կատարինեան Վանքի Դպրոցում, ուր եղել են հայոց եկեղեցու մայրապետներ: Ընդհանրապէս նման կրթական ցանցը շարունակուել է 18րդ եւ 19րդ դարերում. մինչեւ 1880 թուականը:

Եկեղեցիներում եղած դպրոցներից յայտնի են՝ Սբ. Ստեփանոս Եկեղեցու, Սբ Աստուածածին Եկեղեցու, եւ Սբ. Մինաս Եկեղեցու դպրոցները:

Սբ. Ստեփանոս Եկեղեցու Դպրոցը բացել է 1831 թուին

Շար.ը էջ 19




## ԿԵԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԱՒ ԻՐԱՆԱՀԱՅ ԱՍՏՂԱՖԻԶԻԿՈՍ ԱԼԵՆՈՒՇ ՏԷՐԵԱՆԸ



*Մարտի 4-ին, 91 տարեկան հասակում, յաւերժօրէն աչքերը փակեց Իրանի առաջին կին աստղագէտ, ֆիզիկոս, Թեհրանի արեւային աստղադիտարանի հիմնադիր-տնօրէն՝ 1964թ., Թեհրանի պետական համալսարանի (ԹՊՀ) առաջին կին դասախօս, ԹՊՀ Գեոֆիզիկայի եւ աստղաֆիզիկայի հաստատութեան հիմնադիր, «Իրանի աստղագիտութեան մայր» եւ «Մնայուն դէմք» կոչումների արժանացած դոկտ. Ալենուշ Տէրեանը:*

*Ալենուշ Տէրեանը ծնուել է 1920թ. Թեհրանում: 1947թ. աւարտել է ԹՊՀ Գիտութեան ֆակուլտետը եւ նոյն տարուայ Սեպտեմբերից աշխատել իր աւարտած համալսարանի ֆիզիկայի լաբորատորայում:*

*1956թ. դոկտորական կոչումով աւարտել է Փարիզի Սորպոն համալսարանը ու թէեւ Սորպոնում իրեն դասախօսութեան աթոռ էին առաջարկում, նա գերադասում է վերադառնալ ծննդավայր եւ ծառայել Թեհրանում:*

*1961թ. Արեւմտեան Գերմանիայի Հանրապետութիւնում արեւային ֆիզիքայի աստղադիտարանի 4 ամսեայ վերապատրաստման շրջան է անցկացնում:*



*1964թ. արժանանում է դասախօսի կոչման, այդպիսով դառնում է Իրանի առաջին կին դասախօսը:*

*1966թ. ընտրւում է ԹՊՀ Երկրա-ֆիզիկայի կոմիտէի անդամ, երեք տարի անց՝ Երկրաֆիզիկայի հիմնարկի արեւային ֆիզիկայի հետազօտութիւնների խմբի նախագահ: Նոյն տարուանից սկսում է աշխատել արեւային ֆիզիկայի աստղադիտարանում:*

*1979թ. աւելի քան 30-ամեայ դասախօսական շրջանից յետոյ, թոշակի է անցնում իր իսկ խնդրանքով:*

*2003թ. Նրա կեանքի մասին վաւերագրական ֆիլմ է պատրաստուել Իրանի ԻՀ Ռադիոհեռուստատեսութեան պատուէրով՝ «Դէպի արեւը» անուամբ:*

*2006թ. ԻԻՀ նախագահ դոկտ. Մահմուդ Ահմադինեժադի կողմից արժանացել է գնահատանքի եւ շքանշանի:*

*2010թ. Դեկտեմբերի 9-ին, արժանացել է ՀՀ Վիկտոր Համբարձումեանի անուան յուշամետալին:*

*Ալենուշ Տէրեանն այնքան խորացաւ գիտութեան մէջ, որ մոռացաւ իրեն՝ նա երբեք չամուսնացաւ: Իր տունն էլ նուիրեց Սպահանի հայոց թեմին՝ անօթեւան ուսանողներին օգնելու կտակով:*

*Նա իր կեանքի վերջին տարիները անցկացրեց ծերանոցում: Ծերանոցում յայտնուելուց որոշ ժամանակ անց, պետական եւ համայնքային մարմինների կողմից մեծ գիտնականի նկատմամբ դրսեւորուած անտարբերութիւնը բողոք յօդուածով հրապարակ հանեց պարսիկ լրագրողներից մէկը, որից յետոյ դոկտ. Ալենուշ Տէրեանն յայտնուեց ուշադրութեան կենտրոնում, նոյնիսկ անցեալ տարի «Արարատ» մարզաւանում մեծ շուքով տօնուեց նրա ծննդեան 90-ամեակը:*

*Դոկտ. Ալենուշ Տէրեանի վախճանումով իրանահայ համայնքը կորցրեց իր մեծերից մէկին:*

## ՎԱԽՃԱՆՈՒԵՑ ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆԸ



*Մարտի 14-ի առաւօտեան, Թեհրանում, վախճանուեց Վարդան Քամալեանը, ում իր թաղեցիները աւելի շուտ ճանաչում էին «Հայ Վարդան» անունով:*

*Վարդան Քամալեանը գիւղացու զաւակ էր, խիստ ազգասէր, դրանից էլ ստացել էր «Հայ» մականունը:*

*1956թ. Նրա ընտանիքը տեղափոխւում է մայրաքաղաք՝ Թեհրան: 1959թ. մահանում է հայրը, որը թողնելով իր տասը զաւակներին:*

*17 տարեկանում հասակակից տղաների հետ ժողովների էր նստում՝ քննարկելու հայ ժողովրդի վիճակը Սփիւռքում եւ յատկապէս Իրանում:*

*1974թ. Ապրիլի 23-ի երեկոյեան երեք ընկերների՝ Արամի, Ժորժիկի եւ Վալոդի հետ միասին ի բողոք Թուրքիայի հակահայ քաղաքականութեան քարերով յարձակուեցին Թեհրանում Թուրքիայի դեսպանատան վրայ եւ փշրեցին նրա ապակիները: Նոյն օրը կասկածելի պայմաններում ձերբակալուեցին չորս հայորդիները: Մի քանի օր անց ազատուեցին Արամն ու Վալոդը, իսկ Ժորժը «խիստ դիմադրութեան մեղքով» աքսորուեց երկրի հարաւ արեւելեան Զահեդան քաղաք: Վարդանն էլ բաւական կտտանքների ենթարկուեց, իսկ ազատ արձակուելուց յետոյ մեկնեց Ֆրանսա՝ ուսումը շարունակելու:*

*Իսլամական յեղափոխութեան յաղթանակից յետոյ, արդէն ուսումն աւարտած վերադարձաւ Թեհրան եւ կեանքի կոչեց «Հայաստան» կոոպերատիւ հաստատութիւնն ու բանկը, որի լոգոն Հայաստանի առաջին հանրապետութեան եւ Խորհրդային Հայաստանի միակցուած դրօշների պատկերն էր:*

*Վ. Քամալեանը զբաղուեց նաեւ հայ գրի տարածմամբ՝ հրատարակեց հայկական տառատեսակների հաւաքածոյ՝ «Այբուբենը»-ը:*

*Յետ յեղափոխութեան առաջին խորհրդարանի ընտրութիւններում նա առաջադրեց իր թեկնածութիւնը՝ Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան աթոռի համար:*

*Հայաստանի անկախացումից կարճ ժամանակ անց ընտանեօք տեղափոխուեց հայրենիք եւ հաստատուեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում... բայց, դժբախտաբար, կեանքը նրան երկար աւիթ չտուեց...*

*Այս տխուր առիթով ի խորոց սրտի ցաւակցում ենք հանգուցեալի այրիին, դստրերին, հարազատներին ու բարեկամներին:*

*Հողը թեթեւ լինի վրան...*

Հայ news am

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 91-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ
Կազմակերպութեամբ՝
ԱՅՆԹԱՊՑԻՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Հանդիսավարութեամբ՝ ՏԻԿԻՆ ԹԱԳՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ
Գլխաւոր բանախօս՝
ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ԲԱՐԳԵՒ ՏԱՐԱԳՃԵԱՆ
Նաեւ գիրքերու ներկայացում՝
ՊՐ. ԵՐՈՒԱՆԴ ԲԱԲԱՅԵԱՆԻ
ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Յ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ՅԱՅՏԱԳԻՐ
Կիրակի, 3 Ապրիլ 2011, կէսօրէ ետք ժամը 4:00-ին
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ
«Քէչէճեան եւ Անի Գույումճեան» սրահին մէջ
1510 E. Mountain St., Glendale, CA 91207
ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

ARMENIAN AINTABTZY CULTURAL ASSOCIATION
Presents
THE 91ST ANNIVERSARY COMMEMORATION
OF AINTAB HEROIC RESISTANCE
Master of Ceremonies MRS. TAKOUHI ARZOUMANIAN
Keynote Speaker REV. BARKEV DARAKJIAN
Presentation of Books
MR. YERVANT BABAYAN's "Beloved Faces, Books, Accomplishments, Etc."
DR. HAROUTUNE NAZARIAN's "Memoirs of a Genocide Survivor"
WITH A CULTURAL PROGRAM
Sunday, April 3, 2011, at 4:00 p.m.
at St. Gregory Armenian Catholic Church, Kouyoumjian Hall
1510 E. Mountain St., Glendale, CA 91207
REFRESHMENTS & RECEPTION
ALL ARE WELCOME

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

# ԻՆՉՊԷ՞Ս ՄԱՔՐԵԼ ՕՐԿԱՆԻԶՄԸ

- Աթերոսկլերոզի դէպքում օգտակար է սոխից պատրաստուած թուրմը: Կանաչ կամ գլուխ սոխը կտրատել, աւելացնել 100 գրամ սպիրտ: 1 շաբաթ թրմել մութ տեղում: Օրը 2-3 անգամ ընդունել 20-30 կաթիլ: Ըստ մասնագէտների՝ աթերոսկլերոզի կանխարգելման համար անհրաժեշտ է, որպէսզի օրուայ սննդաբաժնի 70 տոկոսը բաղկացած լինի մրգերից ու բանջարեղէնից: Աթերոսկլերոզի դէպքում սննդակարգի մէջ խորհուրդ է տրւում օգտագործել բուսական իւղեր՝ արեւածաղկի, եգիպտացորենի եւ գետնանուշի: Օգտակար եւ սննդարար է ձուկը:

- Օրգանիզմն ախտահանելու-մաքրելու դիւրին եւ անչափ արդիւնաւէտ միջոց. 1 ճաշի գդալ բուսական իւղը (նախընտրելի է՝ արեւածաղկի) պահել բերանի խոռոչում՝ ատամնաշարին մօտ, եւ կոնֆետի պէս ծծել: Կուլ տալ չի թոյլատրւում: Գործողութիւնը պէտք է տեւի 20 րոպէ: Սկզբում իւղը կարծես թանձրանում է բերանում, ապա դառնում ջրիկ, որից յետոյ հարկաւոր է այն թափել: Արտանետուած հեղուկը պէտք է սպիտակ գոյն ունենայ. եթէ դեղնաւուն է, ուրեմն գործողութիւնը պէտք է երկար կատարել: Վերջում անհրաժեշտ է բերանի խոռոչը ջրով ողողել:

- Օրգանիզմը ճարպային ու աղային նստուածքներից մաքրող, կարծրախտը, կրծքահեղձուկը, ինֆարկտը կանխող եւ նիւթափոխանակութիւնը կարգաւորող հին արեւելեան բուժամիջոց.

100-ական գրամ երիցուկը, սրոհունդը, անթառամը (կամ եգիպտացորենի մազիկները) եւ կեչու բողբոջները խառնել, սրճաղացով մանրացնել եւ պահել ամուր փակուած ապակէ ամանի մէջ: Երեկոյեան դեղաբոյսերի խառնուրդի 2 ճաշի գդալի վրայ աւելացնել 0,5լ եռջուր եւ 30-40 րոպէ թրմել թերմոսում: Քամել, մէկ բաժակ եփուկին աւելացնել մէկ թէյի գդալ մեղր եւ խմել: Եփուկն ընդունելուց յետոյ ոչինչ չուտել եւ չխմել: Գործողութիւնը կատարել քնելուց առաջ:

Առաւօտեան մնացած հեղուկին աւելացնել 1 թէյի գդալ մեղր եւ խմել նախաճաշից 15-20 րոպէ առաջ: Այդպէս՝ ամէն օր, մինչեւ խառնուրդի վերջանալը: Այս բուժամիջոցն օգտակար է նաեւ տեսողութեանը:

- Սխտորը (150-200 գ) մանրացնել, խառնել մէկ ճաշի գդալ աղի հետ եւ լցնել մէկ բաժակ եռացրած-սառեցրած ջրի մէջ, խառնել: Սխտորաջուրն աւելացնել օրուայ ընթացքում օգտագործուող պինդ եւ հեղուկ կերակուրների մէջ: Սխտորաջուրն օրգանիզմը մաքրող եւ ախտահանող լաւագոյն միջոցներից է: Սխտորը ոչնացնում է ժամանակակից բժշկութեանը յայտնի համարեայ բոլոր մանրէները:

- Օրգանիզմը խարամներից մաքրող միջոց. ամէն առաւօտ 1,5 ճաշի գդալ աղացած կտաւատի, 1 ճաշի գդալ մաքուր մեղրի եւ 1 թէյի գդալ ձիթապտղի իւղի խառնուրդը ուտել 1 բաժակ թէյի հետ: Մինչեւ կէսօր ոչինչ չուտել: Կրկնել մէկ ամիս շարունակ:

- Առաւօտեան, նախաճաշից 30 րոպէ առաջ օգտակար է խմել հետեւեալ հեղուկը. 1 բաժակ գաղջ եռացրած ջերմուկի մէջ աւելացնել 1 թէյի գդալ մեղր, մի կտոր կիտրոն:

Օրգանիզմի առողջութեան հիմնական նախապայմանը մաքրութիւնն է: Խարամներից օրգանիզմի մաքրումը կատարւում է 3 ամիսը 1 անգամ: Օրգանիզմի կանոնաւոր մաքրումն ամուր առողջութեան, նաեւ երկարակեցութեան գրաւականն է:

Մաքրման մեթոդները բազմազան են:

- Օրգանիզմի մաքրում սովապահութեամբ. մաքրման այս տեսակի մասին ասւում է Աստուածաշնչում (ի դէպ՝ պահքի նպատակը հենց դա է): Սակայն առանց հոգեւոր մաքրման պահքն անիմաստ է դառնում, այն ընդամէնը վերածւում է դիետայի):

- Օրգանիզմի մաքրման մեթոդներից մէկը, որ յանձնարարում է հին արեւելեան բժշկութիւնը, հիմնուած է իւրաքանչիւր օրգանի առանձին-առանձին եւ յաջորդական մաքրման վրայ: Դոկտոր Ուոքերի կողմից առաջարկուած՝ օրգանիզմի մաքրումը թարմ հիւթերով, հանդիսանում է առաւել արագ եւ արդիւնաւէտ մեթոդներից մէկը:

- Կայծքարաջուրը հրաշալի միջոց է աղեստամոքսային տրակտի, աղերի կուտակման եւ այլեւայլ հիւանդութիւնների դէպքում: Պատրաստւում է միայն սեւ կամ գորշ կայծքարից: Մի կտոր կայծքարը խոզանակով լաւ լուանալ օճառաջրի մէջ, ապա մաքրաջրել: Շատ մանր փշրել, լցնել արծնապատ, կաւէ կամ ապակէ ամանի մէջ եւ վրան ջուր աւելացնել: 10 օր յետոյ այն պատրաստ է օգտագործելու համար:

- Աղիքները մաքրելու հրաշալի միջոց. 2 ճաշի գդալ բուսական իւղը լուծել 1 լիտր գոլ ջրի մէջ: Այս հեղուկով հոգնաները շատ են օգնում փորկապութեան դէպքում:

- Օրգանիզմը խարամներից մաքրող, ինչպէս նաեւ՝ գարկ երակային ճնշումը կարգաւորող պարզ միջոց. ամէն երեկոյ 1 սուրճի բաժակ բրնձի հատիկների վրայ աւելացնել ջուր, գիշերը թողնել, առաւօտեան քաղցած ժամանակ ուտել: Բուժման կուրսը՝ մէկ ամիս:

- Օրգանիզմից թթուային թոյները հեռացնելու նպատակով խորհուրդ է տրւում նեխուրի (քարաւուզ) սերմերից թէյ պատրաստել: Մէկ թէյի գդալ նեխուրի տրորած սերմերի վրայ աւելացնել 1 բաժակ եռջուր եւ թրմել 5-10 րոպէ: Ըմպելիքին աւելացնել մէկ թէյի գդալ մանր կտրատած թարմ մաղադանոս: Այնուհետեւ քամել: Թէյը պատրաստ է: Օգտագործել ամէն օր մէկ բաժակ: Բուժման տեւողութիւնը երկու շաբաթ:

- Լեարդը մաքրելու պարզ միջոց. Նախաճաշին օգտակար է հնդկաձաւարի ապուրը՝ բուսական իւղով: Ընդ որում, պէտք է եփել ընդամէնը 1-2 րոպէ: Հնդկաձաւարը նուազեցնում է խոլեստերինի քանակն օրգանիզմում, մաքրում է շլակները:

- 500 գրամ սխտորը քերելմանրացնել եւ լցնել փայտեայ կամ յախճապակեայ տարայի մէջ (սխտորը երկաթեայ տարայի մէջ չպէտք է լինի): 30 րոպէ թողնել մնայ: Վրան աւելացնել 200 գրամ 96%-ոց սպիրտ: Լցնել շշի մէջ, բերանը փակել եւ 10 օր մութ տեղում պահել: Այնուհետեւ քամել, թողնել եւս 2-3 օր, ապա կաթիլ առ կաթիլ խմել սառը կաթի հետ (իւրաքանչիւր անգամ՝ թէյի բաժակի 1/4 չափով կաթ):

Խմել ուտելուց 20 րոպէ առաջ, օրը 3 անգամ: Առաջին օրը՝ 2-ական կաթիլ նախաճաշին եւ ճաշին, 3 կաթիլ՝ ընթրիքին:

Յաջորդ օրերին խմել 1-ական կաթիլ աւելացնելով: Այդպէս շարունակել՝ մինչեւ 15 կաթիլ: Այնուհետեւ 1-ական կաթիլով պակասեցնելով շարունակել խմել այն: 10-րդ օրը ընթրիքին կը մնայ 1 կաթիլ: Այնուհետեւ 11-րդ օրը իւրաքանչիւր խմելուց օգտագործել 25-ական կաթիլ: Այսպիսով կը մաքրէք ձեր օրգանիզմը ճարպային կուտակումներից, կարգաւորւում է նիւթափոխանակութիւնը, անօթները մաքրւում եւ էլաստիկ են դառնում: Այս դեղատոմսը կարելի է կրկնել 6 տարին 1 անգամ յաճախականութեամբ:

Առողջ եղէք:

massisweekly.com

updated every Friday

# ԲՈՅՐԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Սովորութիւնն ու կապուածութիւնը պատճառ է լինում, որ մարդ չցանկանայ փոփոխութիւնների դիմել: Բոյրերն էլ թերեւս նման դէպքերից են: Բոյրը մեծ դեր է խաղում ոչ միայն մարդկանց, այլ նաեւ կենդանիների կեանքում՝ ուտելու խոտեր գտնելու, զոյգ ընտրելու համար:

Մասնագէտները փորձարկել եւ գտել են, որ որոշ բոյրեր տարօրինակ ազդեցութիւն են թողնում տղամարդկանց եւ կանանց վրայ, ապա աւելի հրապուրիչ դարձնում նրանց:

Թէ՛ ժողովրդական փորձով եւ թէ՛ մասնաւոր գիտութեամբ հաստատուել ու ապացուցուել է, որ որոշ բոյսեր իրենց բուրմունքով գրգռիչ ազդեցութիւն են ունենում մարդկանց վրայ, ինչպէս օրինակ՝ փշատենին, աքացիան, էւկալիպտը եւ այլն: Մինչեւ իսկ վերջերս մի խումբ գիտնականներ տարօրինակ հետազօտութիւններ են կատարել գեղեցկութեան ու երիտասարդութեան ոլորտում եւ հետաքրքիր արդիւնքների յանգել բոյրերի վերաբերեալ:

Հետազօտութիւններն անց են կացուել կամաւոր հիմունքներով ու հետեւեալ կերպով: Այսպէս. մի խումբ կանայք օգտագործել են տանձի, խնձորի, դեղձի, նարինջի, պանանի եւ նարդոսի բուրմունքներ, իսկ տղամարդիկ պէտք է կռահէին մասնակցող կանանց մօտաւոր տարիքը՝ բոյրի միջոցով: Վերոյիշեալ բոյրերից ամէնից շատ ազդել էր նարինջի բուրմունքը, եւ այն կանայք, ովքեր օգտագործել էին նարինջի բոյրը, տղամարդկանց աչքին՝ իրենց իսկական տարիքից 5-ից 6 տարի աւելի երիտասարդ էին երեւացել: Հենց րա համար էլ պարֆիւմերիայի բնագաւառում պատրաստւում են նմանօրինակ անուշահոտ եւ գրգռիչ օծանելիքներ, որոնք մեծ ազդեցութիւն են գործում դիմացինի ուշադրութիւնը գրաւելու եւ հաճելի զգացումներ առաջ բերելու տեսակէտից:

Այդ բանն իմացել են նաեւ մեր նախնիները: Իսկ տարբեր ժողովուրդներ իւրովի մօտեցում են ցուցաբերել դրա նկատմամբ: Մասնաւորաբար նորապսակների մօտ՝ հարսնացուի մազերը զարդարում էին էւկալիպտի, նարինջի, աքացիայի ծաղիկներով, քանի որ համոզուած էին դրանք չափազանց գրաւիչ յատկութիւն ունեն:

Ուրեմն ինչպէս տեսնում ենք, բոյրերը լինում են տարբեր տեսակի. կարեւորն այն է, թէ ինչպիսի ազդեցութիւն կ՚ունենան դիմացինի վրայ եւ որ յարմար կը լինի ցանկալի նպատակին հասնելու համար:

Բոյրերը փոփոխելով հեշտութեամբ կարող էք տիրապետել այդ գաղտնիքին: Այնպէս որ առաւել հրապուրիչ դառնալու համար կարող էք օգտուել այս խորհուրդներից:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* $50,00 for USA

* $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.

* $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.

Name: ------------------------------------------

Address: ---------------------------------------

City: --------- State:--------- Zip Code:------

Country: -------------

Tel :------------------------ Fax : -------------------------

## ՊԱՏԱՆԻՆԵՐԸ ՇՈՒՏ ԿԸ ՄԵԾՆԱՆ



*Դպրոցական տարիներուն ընթացքին, գրեթէ բոլոր աշակերտները կը փորձեն իրենց տարիքէն աւելի մեծ անձերու դերեր խաղալ, կարծես անոնք կ'աճապարեն հասուննալու, պատանեկութեան շրջանը թեւակոխելու եւ թերեւս նաեւ դպրոցական տարիներէն շուտ ձերբազատուելու:*

*Այս գծով իրենց օգտակար կը դառնան հեռատեսիլը եւ համացանցի միջոցով առատօրէն տարածուած տեղեկութիւնները:*

*Որովհետեւ անոնց տարիքը առիթ կու տայ մանրամասնօրէն եւ արագօրէն նկատելու ամէն ինչ, անոնք իրենց իսկական տարիքէն աւելի հասուն կը դառնան եւ ծնողքն է, որ զիրենք կը քաջալերէ այսպէս դառնալու: Ինչպէ՞ս:*

*Հոգեբան Փաթրիք Կի Լարոշ կ'ըսէ, թէ ծնողները իրենց զաւակները կը մղեն ըլլալու անկախ՝ զիրենք քաջալերելով ինքնավստահ ըլլալու եւ իրենց պէտքերը անձամբ հոգալու ճամբով: Այս իրենց անհատականութեան մէջ կը սնանի անկախ ըլլալու ոգին, կը քաջալերէ զիրենք՝ անկախ որոշումներ առնելու եւ կարգ մը ատեններ որոշ խնդիրներ մերժելու: Այս պատկերը երեխայ-պատանիին թոյլ կու տայ ինքզինք տեսնելու որպէս մեծ եւ հասուն անձ մը, եւ ան կը սկսի չափահասներու նման վարուելու, այս պատճառով ընտանիքը կը ստիպուի այպանելու զինք եւ ըսելու. «Այս վերաբերմունքը տարիքիդ չէ»:*

*Հարցերը իրենց բնական վիճակին վերադարձնելու նպատակով, կարգ մը միջամտութիւններ պէտք է կատարուին, որովհետեւ պատանին ընդհանրապէս ինքզինք հասուն անձ մը կը կարծէ եւ կ'ունենայ իր տարիքէն աւելի մեծ անձերու փափաքներ: Օրինակի համար, եթէ պատանի մը վիճաբանի ծնողքին հետ, փորձելու համար պակսեցնել իրեն համար արգիլուած խնդիրներու շարքը, պէտք է իրեն բացատրուի որ տակաւին ժամանակը չէ հասած անկախանալու եւ տակաւին ծնողքը կը մնայ իր եւ իր վերաբերմունքներուն պատասխանատուն, սակայն միեւնոյն ժամանակ պէտք չէ մոռնալ, որ իր ազատութիւնը պէտք է աճի իր հետ: Ցաւալին այն է, որ սահմանուած օրէնք մը գոյութիւն չունի, որ ընտանիքին պարտադրէ արգիլուած խնդիրները նշելու կամ արտօնուածներուն շուրջ կլոր մը գծելու: Այս պատճառով, պատանիին միակ աղբիւրը ընդհանրապէս կ'ըլլան իր ընկերներն ու բարեկամները:*

*Կի Լարոշ կ'ըսէ, թէ ընդհանրապէս ծնողքը կը խուսափի մերժելու իրենց զաւակներուն այն փափաքը, որուն յօժարած են անոր ընկերներուն ծնողքը: պահանջուածը անոնց կատարեալ վստահութիւնն է, զոր մերժելու կամ ընդունելու որոշումը ճիշդ է եւ կը յարմարի դաստիարակութեան եւ տնային մթնոլորտին հետ: Օրինակի համար, երբ ծնողք մը տեսնէ, թէ իր պատանի զաւակին կատարածը յարմար չէ կամ եթէ անոր հագուածքը անպատշաճ է, պէտք է քաղաքավար դիտողութիւն մը կատարէ: Պէտք չէ կոշտ արտայայտութիւններ գործածէ կամ անոր հետ երեխայի նման վարուի, որովհետեւ այդ կը վնասէ անոր: Փոխանակ անոր պարտադրելու արգիլուած խնդիրներու ցանկը, պէտք է իր վերաբերմունքին հարցով բանակցիլ իր հետ: Դպրոցական վայել վերաբերմունքի խնդիրով շատ կոշտ պէտք չէ վարուիլ տղայ զաւակին հետ, իսկ աղջիկ զաւակին պէտք է համոզել, որ շատ չափազանցութեան չերթայ գեղեցկագիտական եւ շպարման նիւթեր գործածելու հարցին մէջ:*

*Տարիէ տարի զաւակը պէտք է հասկնայ, որ իր շահած ազատութիւնը պատասխանատու ազատութիւն մըն է, որ իրեն կը պարտադրէ ըլլալ գիտակից իր բոլոր որոշումներուն ու շարժումներուն մէջ: Ծնողք պէտք է պատանիին քաջալերեն աւելի պատասխանատուութիւններ ձեռք առնելու եւ պէտք է անոր օգտակար դառնան՝ որպէսզի ան վայելէ իր տարիքին ամէնէն գեղեցիկ տարիները, անշուշտ առանց ետ մնալու դպրոցական պարտաւորութիւններէն:*

*Արդարեւ, ծնողք պէտք է ընկերակցի իր զաւակին, անոր պատանեկութեան հանգրուանին, որպէսզի վերջինս կարողանայ զայն թեւակոխել համերաշխութեամբ եւ ուրախութեամբ:*

## ՄԱՐԶԱՆՔԸ՝ ՅՂԻ ԿԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

*Մարզանքը ի՞նչ առաւելութիւններ եւ անպատեհութիւններ ունի յղի կիներուն համար: Այս հարցումին պատասխանը կը գտնենք հետեւեալ տողերուն մէջ:*

*Մարզանքին առաւելութիւնները.*

*Մարմնային սերտուած աշխատանքը բազմաթիւ առաւելութիւններ ունի յղի կնոջ համար, անոնցմէ են հետեւեալները.*

** Մարզանքը անոր մօտ յառաջ կը մղէ արեան շրջանառութիւնը, ինչ որ կը պահպանէ զինք այս հանգրուանին տարածուած հիւանդութիւններէ, ինչպէս պնդութիւն, մարսողութեան խանգարում, եւայլն:*

** Մարզանքը լաւ տրամադրութիւնը կ'ամրապնդէ, ինչպէս որ այս առնչութեամբ ճանչցուած է ան, մանաւանդ որ երջանկութեան եւ հանգստութեան հորմոններու արտադրութեան կը սատարէ:*

** Մարզանքը ընդհանուր առմամբ կը բարելաւէ մօր առողջութիւնը եւ նոյնպէս սաղմին՝ անոր յաւելեալ քանակով եւ կենսունակութեամբ թթուածին հասցնելով:*

** Մարզանքը կը պայքարի եւ դէմ կը դնէ գերյոգնածութեան, ընկճուածութեան (ոչ հիւանդագին տեսակին) եւ մտահոգութեան ՝ այս զգայուն հանգրուանին մէջ:*

** Մարզանքը առիթ կու տայ յղութեան շրջանին ընդունելի եւ առողջապահական չափով կշիռքի յաւելացման:*

** Մարզանքը ծննդաբերութիւնը կը դիւրացնէ՝ մարմնին մկաններն ու կենսական օրկանները զօրացնելով:*

** Մարզանքը կ'օգնէ ծննդաբերութենէն ետք մարմնին վայելչակազմութիւնը վերագտնելու:*

*Մարզանքին անպատեհութիւնները.*

*Միւս կողմէ սակայն, յղի կիներուն համար մարզանքի վերաբերեալ որոշ զգուշութիւններ կան, զորս պէտք է նկատի առնել եւ անոնց լաւ ուշադրութիւն դարձնել: Անոնք են հետեւեալները.*

** Անհրաժեշտ է բժիշկին դարմանատունը այցելել՝ այս գծով իր կարծիքը եւ ցուցմունքները առնելու համար, ապա անոնց հետեւիլ բծախնդրութեամբ:*



** Յղութեան առաջին եռամսեայ ընթացքին խուսափիլ միջակ զօրութեամբ մարզանքի տեսակներ կատարելէ, որովհետեւ կարգ մը կիներուն մօտ այս հանգրուանը զգայուն շրջան մըն է, ինչպէս նաեւ վերջին ամիսները:*

** Նախընտրել արեան շրջանառութիւնը աշխուժացնող մարզաձեւերը, ինչպէս քալել կամ լողալ, եւ կամ հանդարտութեան մղող վարժութիւններ, ինչպէս եօկան:*

** Ընդունելի եւ միջին կշռոյթով մարզանք կիրարկել՝ օրական կէս ժամ (կամ քիչ մը աւելի՝ մարմնային բարձր կարողութիւններ ունեցողներուն համար), կամ շաբաթական երեք կամ չորս անգամ:*

** Յոգնութիւն զգացած վայրկեանին կանգ առնել:*

**Մարզանքի ընտրուած տեսակը կիրարկելու ժամանակ խուսափիլ քրտնելէ (մանաւանդ չափազանց քրտինքը) եւ շունչի նեղութեան աստիճանի հասնելէ:*

** Ջուր եւ այլ տեսակի հեղուկներ շատ սպառել, որպէսզի չորացում չի յառաջանայ, ինչ որ յոգնութիւն եւ առողջապահական այլ հարցեր կը պատճառէ, որմէ պէտք է հեռու մնայ յղի կինը:*

** Բամպակէ պատրաստուած լայն հագուստներ ընտրել, որոնք արեան շրջանառութիւնը չեն խանգարեր, որպէսզի աւելի հանգիստ եւ ապահով վիճակի մէջ ըլլայ:*

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**Սիսեցիներու Հայրենակցական Միութեան վարչութիւնը կը հրաւիրէ բոլոր հայրենակիցները անխտիր ընդհանուր ժողովի, որ տեղի պիտի ունենայ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ «Անտոնեան» սրահին մէջ Կիրակի, Մարտ 27, 2011, կէսօրէ ետք ժամը 2:00ին:**

**Հասցէ՝ 58 South Sierra Madre Blvd.**
**Pasadena, CA 91107**

**Բոլորիդ ներկայութիւնը խիստ փափաքելի է:**

# ԻՆՉ ՊԷ՞Ս ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

*Մարդու տրամադրութիւնը ուղղակիօրէն կապուած է նրա հոգեվիճակին:*

*Եթէ անտրամադիր էք, հետեւէք հետեւեալ խորհուրդներին:*

*Ֆիզիքական շարժումներ – Երբ մարզական շարժումներ էք կատարում, օրինակ՝ շուէտական մարզանքով էք զբաղւում, ինքնին, նպաստում է մարդու հոգեվիճակի բարելաւմանը: Ռոբոտիկ շարժումները, արագ քայլելը, վազելը, լողալը եւ այլն խթանում են սրտի աշխատանքը, արեան շրջանառութիւնն ու բարձրացնում թթուածնի մակարդակը օրկանիզմում:*

*Երաժշտութիւն – Երգն ու երաժշտութիւնը, անտարակոյս, կարող են խորապէս ազդել մարդու վրայ եւ փոխել նրա ընկճուած հոգեվիճակը:*

*Սկզբում հարկաւոր է լսել այնպիսի երաժշտութիւն, որ հոգեհարազատ է եւ համապատասխանում է հենց ներկայ հոգեվիճակին ու տրամադրութեանը, որից յետոյ կարելի է փոխել. այնպէս որ աւելի ուրախ ու ռիթմիկ հնչի եւ ազդի մարդու տրամադրութեան վրայ:*

*Ուտելիք – Նման պարագաներում հարկաւոր է օգտուել այնպիսի մննդամթերքից, որոնք հանգստացնող են եւ թուլացնում են լարուածութիւնը: Այդպիսի սնունդները պարունակում են ածխաջրեր, եւ բարերար ազդեցութիւն գործում ուղեղի բջիջների վրայ: Քիչ չափով սուրճը հաւանաբար հանգստացնի օրկանիզմը, սակայն դրա մեծ չափի գործածութիւնը կը բերի լարուածութիւն եւ դեպրեսիայի խորացում:*

*Գոյներ – Որոշ գոյներ բացասական ազդեցութիւն ունեն մարդու հոգեվիճակի վրայ եւ նրան աւելի տխուր ու մռայլ են դարձնում: Այդպիսի գոյներից են՝ սեւը եւ մուգ կապոյտը: Իսկ կարմիր գոյնը, ինչպէս գիտէք, առաւել լարուածութիւն եւ ջղաձգումներ է առաջացնում: Լարուած հոգեվիճակում աւելի լաւ է օգտագործել բաց եւ պարզ գոյներ: Կանաչը, բաց կապոյտը, դեղինը, սպիտակը հանգստութիւն են ներշնչում, դրա համար էլ հարկաւոր է նման պարագաներում շրջապատուել այդ գոյնի իրերով ու առարկաներով:*

*Լոյս– Լոյսի առատութիւնն ու սակաւութիւնն ինքնին ազդում են մարդու հոգեկանի վրայ: Երբ լոյսն ուժեղ է լինում եւ առատ, անհատի տրամադրութիւնը բարձրանում է, յոգնածութիւնն ու լարուածութիւնը աստիճանաբար չքանում:*







# ՅԱՂԹԱՆԱԿԻ ԴԱՐՁԵՐԵՍԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*Նուարդ Սողոմոնեանը գրեթէ միշտ հասել է նպատակին: Զրուցակիցները հետզհետէ նրան վստահել, անկեղծացնել, հաղորդել են ամբողջ ճշմարտութիւնը:*

*Գրեթէ ամբողջը: Եւ ճիշդ են արել, որովհետեւ ատրպէյճանցիները, որոնք իրենց իսկ սանձազերծած պատերազմի սկզբում մոլեգնում, ամբողջ արցախահայութեան արիւնը խմել էին ուզում, այժմ խեղճացել, համաշխարհային հանրութեանը փորձում են ապատեղեկացնել, իրենց անմեղ զոհ ներկայացնել:*

*Մի քանի դրուագ միայն.*

*«Գասըմ անունով թուրքը մօտեցաւ, կտրեց Գագիկի երկու ականջները:*

*– Սա վերջին հայ-թուրքական կռիւն է,- ասաց.*

*Հռհռոց.*

*Կացինը բարձրացրեց, ձախից ուժեղ հարուածով ճեղքեց*

*Գագիկի թիկունքը:*

*Յետոյ ձեռքը գցեց, սիրտը հանեց.*

*– Բոլորիդ մէկ-մէկ էսպէս.*

*Թուրքի ափի մէջ տաք-տաք թփրտում էր արիւնոտ սիրտը»:*

֍֍֍

*«Թրքական գիւղ՝ Վաղագին: Զօրանոց: Տարան մի սենեակ: Օդի մէջ հաշիշի, օղու, գինու հոտ:*

*Կուրծքը մինչեւ գօտկատեղը բաց, սեւ տուշէ դաջուածքներով ճաղատ մարդը դանակը բաց մօտենում է: Տեսքը ահազդու է: Ձեռքը մեկնում է դէպի անկիւնը:*

*– Դու կը լինես տասներեքերորդը:*

*Գերին սոսկումից ճչաց: Շարուած են գանգեր՝ մուգ ակնախոռոչներով.*

*– Ձերոնց գլուխներն են: Հիմա քո կաշին էլ եմ քերթելու...*

*Դանակը պահեց կզակի տակ»:*

֍֍֍

*«Վերջին տասն օրը ամենաահաւոր բաները կատարուեցին:*

*Սպիտակ վերնազգեստով մարդիկ եկան: Դժուար չէր կռահել, որ բժիշկներ էին. մեկուսարաններից ջոկում ու տանում էին երիտասարդներին: Կասկած մտաւ Կոլեայի սիրտը՝ երեւի տանում են գնդակահարութեան: Դուռը ծեծեց եւ խնդրեց թոյլ տալ բնական պէտքերը հոգալու: Կիսաբաց անցքից նայեց:*

*Այն, ինչ տեսաւ՝ հնարաւոր չէ նկարագրել. աքցանով ջարդում էին ատամնաշարերը, որ հայի սերմը վերանայ երկրի երեսից»:*

֍֍֍

*Սրանք դեռեւս իրենց «ծառայողական պարտականութիւնները» կատարող դահիճներն են: Շուշիի, Պաքուի, Աղդամի բանտերից վերադարձող ռազմագերիները պատմել են (գրեթէ բոլորը), որ երեկոյեան, այսպէս կոչուած խաղաղ բնակիչները, որոնք թւում եւ բազմաթիւ կանայք, հսկիչներին կաշառք են տուել, ներխուժել են կալանախցերն ու ռազմագերիներին տանջելով, յաճախ սպանելով, զուարճացել: Աւելի հարուստները ռազմագերիներ են գնել, իրենց ուրախութեան տօներին՝ յատկապէս հարսանիքներին, մատաղ արել:*

*Նուարդ Սողոմոնեանը այս ամէնի մասին պատմում է հայ գրողի արժանապատուութեամբ ու անկողմնակալութեամբ, վկայում է նաեւ, թէ ինչպէս առանձին հսկիչներ խղճում էին մեր ռազմագերիներին, թաքուն սնունդ, ծխախոտ հասցնում, նոյնիսկ փախուստներ կազմակերպում: Խոշոր փրկագնով՝ ի հարկէ: Նրանցից մէկը նոյնիսկ ասել է՝ «Այս ամէնը մեզ չի ներուելու»:*

*Իրօք՝ չներուեց: Նուարդ Սողոմոնեանը վաւերապատումները յաճախ ընդմիջում է Աստուածաշնչեան մէջբերումներով, մութալիքեան սպառնալիքներով ու կորպաչովեան ճամարտականութիւններով՝ հաւաստելու համար, որ անկախ հակառակորդի վայրագութիւնից, քաղաքական խարդաւանքներից ու դիւանագիտական սադրանքներից, ի վերջոյ յաղթում է պատմական ճշմարտութիւնը: Արդարութիւնը: Հայի կամքն ու ոգին:*

֍֍֍

*Սիրելի Նուարդ, դատելով քո կենսագրականից, մենք գրեթէ հասակակիցներ ենք, ու ես, ինչպէս դու, իմ ստեղծագործական կեանքը հիմնականում նուիրաբերել եմ դարավերջեան հերոսամարտի վաւերագրութեանը: Հիմա, երբ ընթերցում, վերընթերցում եմ գրքերդ, ուրախանում եմ, որ քո պէս տաղանդաւոր գրչակից ու համախոհ ունեմ, քեզ հետ ինքս ինձ աւելի ինքնավստահ, ուժեղ եմ զգում: Աւելին՝ հաւատում ենք, որ մենք նոր ազատամարտերի ու յաղթանակների պիտի ականատես լինենք, նոյն անաչառութեամբ, հպարտութեամբ վաւերագրենք: Շնորհակալութիւն այդ հաւատի համար:*

**INVITATION FOR BIDS**
**(IFB) NO. 1707**
**THE RENOVATION OF THE 1st AND 2nd FLOORS AT 515 COLUMBIA AVE., LOS ANGELES, CA 90017**

**The Housing Authority of the City of Los Angeles invites vendors to submit bids for The Renovation of the 1st and 2nd Floors at 515 Columbia Ave., Los Angeles, Ca 90017. Copies of the IFB may be downloaded online beginning March 20, 2011, at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 p.m. (local time), April 20, 2011.**

3/24, 3/31/11
CNS-2060815#
MASSIS WEEKLY

**REQUEST FOR QUALIFICATIONS**
**(RFQ# 7547)**

**The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites qualified engineering firms to develop and prepare a vested tentative Tract Map for the entire project with a final map for Phase I for the proposed HACLA-owned Jordan Downs Redevelopment Project based upon the Jordan Downs Community-Based Master Plan in accordance with the Subdivision Map Act and applicable City of Los Angeles requirements. Copies of the RFQ may be obtained beginning March 14, 2011 online at http://www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 P.M., April 8, 2011.**

3/24, 3/31/11
CNS-2060616#
MASSIS WEEKLY

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ԼԵՒՈՆ ՎԱՆԵՍՔԵՀԵԱՆ*
*(Սեպտեմբեր 12, 1928 Դամասկոս - Փետրուար 19, 2011 Սանդա Անա)*

*Հանգուցեալ ԼԵՒՈՆ ՎԱՆԵՍՔԵՀԵԱՆի մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Ապրիլ 3, 2011, Սանդա Անայի Ս. Սրբոց Քառասուն Մանկանց եկեղեցւոյ մէջ, 5315 W. McFadden Ave. Santa Ana:*

*Սգակիրներ՝*
*Այրին՝ Արտեմիս Վանեսքեհեան*
*Զաւակը՝ Արա եւ Քնար Վանեսքեհեան*
*Դուստրը՝ Հելէն եւ Արթին Գէորգեան*
*Զաւակը՝ Մհեր եւ Ռոզմերի Վանեսքեհեան*
*Քոյրը՝ Ազատուհի Ջէյլթունեան*
*Եւ համայն Վանեսքեհեան, Գէորգեան, Մխիթարեան, Ջէյլթունեան, Մոմճեան, Միքայէլեան ընտանիքներն ու հարազատները:*
*Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի:*
*Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

*Շարունակուածէջ 14-էն*

*թեմակալ առաջնորդ Կարապետ Եպիսկոպոս Ջուղայեցու ջանքերով, Գրիգոր Սամեանի, ապա Մարգար Սուքիասեանի յատկացրած դրամագլխով: Դպրոցը կոչուել է Ամենափրկչեան ճեմարան: Ուսուցիչ է եղել յայտնի մտաւորական, գրող Մեսրոպ Թաղիադեանը:*

*Սբ. Աստուածածին Եկեղեցու Դպրոցը սկսել է 1840 թուից, Յարութիւն Աբգարեանի միջոցով. ընդհանրապէս Աբգարեանց տոհմը բազմաթիւ ուսուցիչներ է տուել Նոր Ջուղայի հայոց ազգային դպրոցներին: (Տարրական երկրորդ դասարանում ես աշակերտել եմ ուսուցիչ Պր. Տիգրան Աբգարեանցին, որ այդ տոհմի վերջին ուսուցիչը եղաւ. Նա պատմաբանասիրական աշխատութիւններ է հրատարակել Նոր Ջուղայի մասին):*

*Սբ. Մինաս Եկեղեցու Դպրոցը բացուել է 1853 թուին, ջաւայաբնակ Նորջուղայեցի, երկու քոյրեր, Տիկին Մարիամ Յարութիւնեանի եւ Տիկին Թագուհի Մանուկեանի նուիրած դրամագլխով:*

*Ժողովրդի թուի բարձրացման եւ կարիքների ընդարձակման ու արդիականացման բերումով կրթական եղած ցանցը սկսում է արդէն անբաւարար դառնալ: 1880 թուին թեմակալ առաջնորդ Գրիգորիս Արքեպիսկոպոս Յովհաննիսեանի գլխաւորութեամբ եւ մասնակցութեամբ Նոր Ջուղայի, Հնդկաստանի եւ Ջաւայի Նորջուղայեցի ազգայինների նիւթական նպաստների գումարով հիմնադրւում է Նոր Ջուղայի Հայոց Ազգային Կենտրոնական Դպրոցը: Դպրոցի կառուցման դեղնապղնձեայ յուշասալի վրայ հայերէն եւ անգլերէն գրուած է.*

*«Յամի տեառն 1843 Հայկեան Հայրենասիրական Ուսումնարան Նոր Ջուղայ կառուցաւ արդեամբք հանգ[անակաւ] Յարութիւն եւ Գրիգոր Աբգարեանց, որք ի Կալկաթա երկուցոնց որդւոյ հանգուցեալ Աբգարի Աղազարեայ Սեթեանց եւ Սանդխտոյ ամուսնոյն իւր, որք ի Ջուղա, եւ արդեամբ հանգ[անակաւ] Աղա Յովհանջանի Էլիզեան, որ ի Կալկաթա, ի յիշատակ իւրեանց, ապա պայմանաւ իւիք միացեալ ընդ Ազգային Կենտրոնական Ուսումնարանին հաստատելոյ աստ ի Ջուղա յամի տեառն 1880»:*

*Դպրոցի ընդարձակ շէնքի կառուցումը մասամբ աւարտւում է 1883ին, ժողովրդական մեծ հանդիսութեամբ կատարւում է բացումը. շէնքը լիակատար աւարտւում է 1893 թուին: Այս դպրոցում համախմբւում են բոլոր եկեղեցիների դպրոցների աշակերտութիւնը: Այնուհետեւ եղել են նորանոր կառոյցների աւելումներ:*

*Կուսանաց Սբ. Կատարինեան Վանքի Դպրոցը եւս նոր կարիքների բերումով ընդարձակւում է. 1858 թուին Նորջուղայեցի ջաւայաբնակ Մանուկ Յորդանանեանի դրամական նուիրատուութեամբ: Նոյն բարերարի նուիրատուութիւններով դպրոցը հերթաբար ընդարձակւում է: 1899 թուին աղջիկների համար այլեւս առանձին դպրոցական շէնք ունենալը դառնում է անհրաժեշտութիւն: Ժամանակի թեմակալ առաջնորդ Մաղաքիա Եպիսկոպոս Տերունեանը կրօնկան խորհրդի հետ ձեռնամուխ են լինում հանգանակութեան՝ Նոր Ջուղայում, Հնդկաստանում եւ Ջաւայում, հաւաքում են չորս հազար թուման, որով 1900 թուին հիմնարկւում են Սբ. Կատարինեան Օրիորդաց Դպրոցը:*

*1901 թուին կառուցւում է Գէորգ Քանանեան Ազգային Դպրոցը, բարերարութեամբ Տիկին Վարվառէ Քանանեանի, ի յիշատակ ամուսնու՝ Մոսկուայի Լազարեան ճեմարանի ժամանակի տնօրէն Գէորգ Լազարեանի: Կառուցումը աւարտւում է 1905 թուին: Տարիներ՝ առաջին յարկի դասարանները օգտագործուել են որպէս մանկապարտէզ: 1975 թուին մանկապարտէզը փոխադրւում է Քիշմիշի այգում կառուցուած շէնքը, ապա 1977 թուին տեղափոխւում է Տէր Մեսրոպենց տունը, որ մեծ ու յարմարաւէտ շէնք է այդ նպատակի համար: Կոչւում է Գէորգ Քանանեան Ազգային Մանկապարտէզ:*

*Կենտրոնական դպրոցի տարածքներում 1970ական եւ 1980ական թուականներում կառոյցների աւելումներ են եղել ըստ կարիքի, ուր տեղաւորուել է Արմէն Նախակրթարանը:*

*Հիմնական յիշեալ երեք դպրոցները տարիների ընթացքում, ըստ կարիքի ու նպատակաբաշխման, օգտագործուել են՝ որպէս տղաների, աղջիկների կամ երկսեռ աշակերտութեան համար: 1907-20 թուականներում կենտրոնական դպրոցի երկրորդ յարկը օգտագործուել է որպէս հոգեւոր գիշերօթիկ դպրոց: 1950-60ական թուականներում Քանանեան դպրոցի երկրորդ յարկը օգտագործուել է որպէս տղաների որբանոց:*

*Նոր Ջուղայի հայոց դպրոցները սկզբից պատկանել են Նոր Ջուղայի վանքին, ապա թեմին, ապա ազգային համայնական, կամ կրօնական, ապա թեմական խորհրդին: 1935 թուին Ռեզա Շահ Փահլաւի Թագաւորը, պետականացրեց Իրանի հայոց բոլոր դպրոցները, երբ պետական այցով հանդիպեց Թուրքիայի Նախագահ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքին, պետական հրաւէրով այցելելով Թուրքիա: Յայտնի է, որ նա այդ արեց Աթաթուրքի խորհրդով, ճզմելու համար իրանահայութեան զարգացումը: Հայոց դպրոցների պետականացումով, որ տեւեց մինչեւ 1955 թիւը, իսկապէս իրանահայութիւնը տուժեց կրթական, գիտական, տնտեսական եւ հասարակական առումով: Մանաւանդ Նոր Ջուղան ինքնամփոփուեց այն խորթ մթնոլորտում, ուր դպրոցի բոլոր աշակերտութիւնը հայ էր, բայց տնօրինութիւնը եւ ուսուցչական կազմը պարսիկ էր, դասաւանդութիւնը պարսկերէն: Շաբաթական 2-3 ժամ յատկացուած էր կրօնի, որ մասնաժամեայ մէկ-երկու հայ ուսուցիչներ պարապում էին՝ հիմնականում հայոց լեզու, ընթերցանութիւն միայն, պատահական մի քիչ քերականութիւն, ըստ ընթերցանութեան նիւթից առաջացած կարիքի: 1950-60ական թուականներում հայ աշակերտութիւնը դպրոցներում հայերէն թելադրութիւն կամ շարադրութիւն չէին գրում, հայոց պատմութիւն չէին պարապում: 1930-60ական թուականները Նոր Ջուղայի հայոց դպրոցներից հայ մտաւորական գրող են դարձել միայն մի տասնեակ: Դա ցուցանիշ է հայ հասարակութեան կրած կրթական, մտաւորական զարգացման կորուստի ու վնասի:*

*1952-5 թուերին Նոր Ջուղայի Հայոց Դպրոցների Հոգաբարձութիւնը, որ մանկապարտէզից բացի ոչմի դպրոց չունէր իր տնօրինութեան ներքոյ, կազմակերպեց երեկոյեան հայերէնի դասընթացներ: Ժամանակի միջնակարգ դպրոցների հայ աշակերտութեան մի մեծ մասը մասնակցեց այդ դասընթացներին, Քանանեան Դպրոցի երկրորդ յարկում, գոհացուցիչ արդիւնքով:*

*Իրանի կառավարութիւնը 1955 թուին հայոց դպրոցները վերադարձրեց հայութեան: Մեծ էր իրանահայութեան ոգեւորութիւնը, կրթական, մտաւորական առաջընթացը, որ տեւեց մինչեւ 1979 թուականը, երբ Իսլամական Յեղափոխութեան կառավարութիւնը վերստին պետականացրեց հայոց դպրոցները. կրօնի դասագիրքը նոյնիսկ փոխեց պարսկերէնի: Վիճակը շարունակւում է մինչեւ այսօր:*

**ՔԱՋ ՆԱԶԱՐ**
**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**
**Ամէն Կիրակի երեկոյեան**
**ժամը 10:00-ից 12:30**
**Կլէնտէյլի 380-րդ կայանից**

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինկս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

# NOW OPEN SUNDAYS!

# MISSION
WINE & SPIRITS

**GLENDALE STORE ONLY!**

## ԱՉՔԸ ԼՈՅՄ՝
## ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԽՄԻՉՔ ՍՊԱՌՈՂՆԵՐՈՒՆ

**Mission Liquor** խմիչքի հաստատութիւնը որ փակ կը մնար Կիրակի օրերը, յետ այսու եւ միայն ԻՐ ԿԼԵՆՏԷՅԼԻ մասնաճիւղը պիտի բանայ ամէն Կիրակի, առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 4-ը, սկսեալ՝ Կիրակի Մարտ 6-էն:

Կլենտէյլի հասցէն է՝

**GLENDALE**
825 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202
(818) 242-0683 ● Mon-Sat. 9AM-8PM ● Sunday 10AM - 4PM

**PASADENA**
1785 E Washington Blvd., Pasadena, CA 91104
(626) 794-7026 ● Mon-Sat. 9AM - 8PM

**SHERMAN OAKS**
13654 Burbank Blvd., Sherman Oaks, CA 91401
(818) 785-6529 ● Mon-Sat. 9AM - 8PM